Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

Կաթողիկէ հայատաք

ԱՇՈՅՔԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԻ
ՀՈԳԵՒՈՐ ԹԵՐԹԸ

Գ. ապրիլ, 2022





Աստուա՛ծ իմ, դարձրո՛ւ ինձ Քո խաղաղութեան գործիքը,
Այնտեղ, ուր ատելութիւն է, օգնի՛ր, որ սէր սերմանեմ,
Ուր վիրաւորանք է՝ ներում սերմանեմ,
Ուր կասկած է՝ հաւատք,
Ուր յուսահատութիւն է՝ յոյս,
Ուր խաւար է՝ լոյս,
Ուր տխրութիւն է՝ ուրախութիւն:
Ո՜վ Աստուածային Վարդապետ,
Շնորհ տո՛ւր, որ ոչ այնքան մխիթարութիւն փնտրեմ, այլ ավելի՝ մխիթարեմ,
Ոչ թէ ձգտեմ հասկացուել, այլ՝ հասկանալ,
Ոչ թէ սիրուել, այլ՝ սիրել,
Որովհետեւ տալո՛վ է, որ ստանում ենք,
Ներելո՛վ է, որ ներւում ենք,
Մեռնելո՛վ է, որ վերածնւում ենք՝ յաւիտենական կեանքի համար:

Սբ. Ֆրանցիսկոս Ասսիզեցի

Ինչպե՞ս կատարել հատուցում. մարդկային տառապանքի իմաստը

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց

Մեր նախորդ խորհրդածությունների մեջ խոսում էինք մեղքերի դիմաց հատուցում կատարելու անհրաժեշտության մասին՝ Ապաշխարության խորհուրդն ընդունելիս, որպեսզի պահվի արդարության սկզբունքը: Այդ հատուցումները նշանակվում են քահանայի կողմից: Նաև ասացինք, որ հատուցումները մարդուն ազատում են ժամանակավոր պատիժներից, որոնք մարդը, որպես իր մեղքերի արդարացի հետևանք, կարող է կրել կամ այս երկրային կյանքի ընթացքում, կամ՝ հանդերձյալում՝ քավարանի վիճակում, այս կյանքում՝ ուղղվելու, իսկ հանդերձյալում մաքրագործման համար: Ժամանակավոր պատիժները Ապաշխարության խորհրդակատարության ժամանակ մեղքերի ներման հետ միաժամանակ չեն վերանում, ինչպես սովորեցնում է Սուրբ Եկեղեցին, որպեսզի մարդը մատների արանքով չնայի մեղսագործությանը. ցավից ու զղջումից բացի խոստովանողը պետք է նաև կրի ուղղիչ պատիժները, որոնք կարող են մեղմացվել կամ վերանալ՝ քահանայի նշանակած հատուցումների, ինչպես նաև՝ լրացուցիչ կերպով կամավոր *ստանձնած հատուցումների և կյանքի դժվարությունները համբերությամբ՝ որպես հատուցում, կրելու* միջոցով: Այս երկու շատ կարևոր կետերի մասին էլ կուզեմ ծավալել մեր այս և հաջորդ խորհրդածությունները:

Կամավոր հատուցումները

Կամավոր հատուցումների արժեքը անփոխարինելի է: Դրանցից կարելի է մեծ բարիքներ ընդունել՝ թե սեփական անձի և թե մերձավորի համար՝ դեռևս երկրի վրա ապրող կամ այս կյանքից հեռացած: Հատուցումները կարող են լինել երկարատև կամ կանոնավոր աղոթքների տեսքով, քահանայից սեփական անձի կամ ուրիշի դիտավորությամբ Պատարագ մատուցել խնդրելով և դրա համար գումարային կամ այլ նվիրատվություններ անելով, պահեցողության կամ ծոմապահության միջոցով, որոնք կարող են պահվել նաև ծիսական պահքերի օրերից դուրս, և, վերջապես, այսպես կոչված «մահացումների» միջոցով, որոնք կարող են լինել սեփական մարմինը անհարմարությունների ենթարկելու միջոցով, ինչպես սովոր էին անել շատ սրբեր: Սբ. Հովհաննես Մկրտիչն օրինակ հագնում էր ուխտի մազից զգեստ, որ շատ կոպիտ էր, անապատական հայրերը ևս գիշերը քնում էին չոր հատակին, հագնում էին անհարմար հագուստ, երկար ժամեր աղոթում էին և ծանր աշխատանք կատարում: Ֆրանսիացի սուրբ, Արս գյուղի քահանա Ժան Մարի Վիաննեյը (1786-1859թթ.) ևս սովորություն ուներ քնելու չոր հատակին, ուտում էր միայն հին և չորացած հաց և կրում էր այլ զրկանքներ, բայց այդ զոհողություններով և իր սրբությամբ փրկեց ոչ միայն իր, այլև՝ Արսի շատ բնակիչների հոգիներ, կրթության մեջ չփայլելով՝ Ֆրանսիայի ամենասիրելի խոստովանահայրերից մեկը դարձավ: Պորտուգալական Ֆաթիմայի երեք փոքրիկները՝ Ֆրանչեսկոն, Հակինթան և Լուսիան, որոնց երևաց Աստվածամայրը (1917թ.) և պատվիրեց զոհողություններ անել՝ մեղավորների հոգիների փրկության համար, և նրանք, լինելով ութ, ինը և տասը տարեկան, քնում էին իրենց մեջքներին պարաններ կապած, իրենց օրապահիկները, որ մայրիկները տալիս էին՝ ոչխարներին հովվելու ամբողջ օրվա համար, տալիս էին սոված շներին, իսկ իրենք մնում էին սոված և այդ փոքրիկ տառապանքները նվիրում էին Աստծուն՝ որպես հատուցում կամ քավության ընծա՝ մեղավորների համար: Նրանք ևս սրբադասված են: Այսպիսի օրինակները շատ են, վստահ եմ, նաև՝ մեր օրերում և, գուցե, մեր կողքին:

Կամավոր հատուցումները կամ զոհողություններն, այսպիսով, նաև մերձավորի հանդեպ սիրո քայլեր են, նաև՝ փրկության միջոց: Եթե կարող ենք այս ճանապարհով փրկել ինքներս մեզ կամ ինչ-որ մեկի հոգին և կյանքը, ինչու՞ չանել: Եթե մեզ խանգարում է վստահությունը՝ արդյունքների մեջ, ուրեմն պետք է միշտ մեր հայացքը հառենք Խաչյալ Հիսուսին, որ յուրաքանչյուրիս համար կատարեց մեծագույն և անփոխարինելի հատուցումը կամ զոհողությունը և փրկեց մեզ՝ դատապարտությունից, ազատեց չարի ճիրաններից: Տերը *կամավոր հոժարությամբ ստանձնեց իր Խաչը* և մենք էլ, եթե ուզում ենք կոչվել Նրա աշակերտները, պետք է նույնը անենք:

Համբերությամբ կրել տառապանքը, որպեսզի չարիքից բարիք դուրս գա

Ավելի բարդ է, երբ որպես հատուցում և զոհողություն ընդունենք մեզ *օբյեկտիվորեն*, այսինքն՝ *ակամա* բաժին ընկած բոլոր դժվարությունները՝ սեփական հիվանդությունները, հաշմանդամությունը, սոցիալական խնդիրները, հարազատների ցավերը, մահը: Դրանց մի մասը, հնարավոր է՝ Աստծուց լինեն՝ որպես մարդու համար ժամանակավոր պատիժ կամ դարձի գալու, մեղքերի վնասների փոխարեն հատուցում կատարելու հնարավորություն, սակայն մի մասն էլ՝ ոչ, առանց որևէ պատճառի, առեղծվածային ձևով, պարզապես այն պատճառով, որ մարդու մարմինը ենթակա է դարձել ապականությանը՝ նախնական մեղքի հետևանքով, որ երկիրն անիծվեց Կայենի եղբայրասպանության հետևանքով: Մեր առջև ծառացած ցավերի ու բարդությունների պատճառը մարդու համար մնում է առեղծվածային խորդուրդ, որը միայն Աստված գիտի: Քրիստոնյայի ճանապարհն է՝ Քրիստոսի նման համբերատարությամբ կրել այս կյանքի յուրաքանչյուր դժվարություն և այն դարձնել մի անկրկնելի հնարավորություն՝ սեփական անձին կամ ուրիշներին բարիք անելու համար: Ավելին, առաքյալները պատվիրում են ուրախանալ, երբ փորձությունների մեջ ենք

ընկնում. Սբ. Պողոսը գրում է. «*Պարծենում ենք մեր նեղությունների մեջ, որովհետև գիտենք, որ նեղությունները համբերություն են բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Հույսը երբեք չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով*», Հռմ. 5, 3-4: Սբ. Պետրոսը բացատրում է, թե ինչ է այս հույսը. «*Սիրելինե՛ր, փարօրինակ մի՛ համարեք այն այրող նեղությունը, որ ձեզ փորձելու համար է ... այլ ուրախացե՛ք՝ որպես Քրիստոսի չարչարանքների մասնակիցներ, որպեսզի նրա փառքի ժամանակ էլ ցնծությամբ բերկրենք*», Ա Պետ. 4, 12-13: Ուրեմն, նեղություններին համբերելու հույսը Քրիստոսին նմանվե՛լն է և Նրա հետ միասին մեղքի և չարի հանդեպ վերջնական հաղթանակ տանելն է: Սբ. Պողոսն այս թեման առավել զարգացնում է Կորնթացիներին ուղղված իր նամակում. «*Ամեն ինչում նեղություն ունենք, բայց ընկճված չենք, կարոտյալ ենք, բայց հուսահատ չենք, հալածված ենք, բայց՝ ոչ լքված, չարչարված ենք, բայց՝ ոչ կործանված: Մեր մարմինների մեջ շարունակ կրում ենք Հիսուսի մահը, որպեսզի Հիսուսի կյանքն էլ հայտնվի մեր մարմինների մեջ», Բ Կորնթ. 4, 8-10:*



Սբ. Հովհաննես Պողոս Բ Պապը Սուրբ Եկեղեցուն թողել է մի հրաշալի առաքելական նամակ՝ մարդկային տառապանքի իմաստի մասին, որ կոչվում է «*Փրկարար տառապանք*» (Salvifici doloris, 1984թ.), որտեղ փորձ է արված պատասխանել մարդկային տառապանքի մասին հիմնարար հարցին, որ է՝ «*Ինչու՞*»-ն: Այս հարցադրումն առավել սուր ձևով մարդու առջև ծառանում է, մանավանդ, այն ժամանակ, երբ մարդը չի կարողանում գտնել որևէ պատճառ՝ իր տառապանքի համար, որ վրա է հասնում հանկարծակի և անսպասելի՝ հիվանդության, աղքատության, ցավի կամ որևէ այլ տեսքով: Սբ. Հովհաննես Պողոս Բ-ը, որպես անմեղ տառապանքի օրինակ, նախ հիշում է Հոբին, որի մասին արդեն մենք խոսեցինք Պահքի մասին մեր երկրորդ խորհրդածության ժամանակ: Հոբը միշտ մնում է որպես օրինակ մի արդար մարդու, որ ստիպված եղավ տառապել՝ առանց վաստակելու այդ տառապանքը՝ որպես պատիժ: Բայց Աստված նրա անպատճառ տառապանքից բարիք հանեց՝ պարտության մատնելով սատանային: Հոբը վստահ է, որ Աստվա՛ծ է թույլ տվել, որ ինքն անցնի այդ դաժան տառապանքի միջով՝ ինչ-որ նպատակով, որ չի կարող չարիք լինել, և ուզում է իմանալ իրեն տանջող այդ սուր հարցի պատասխանը: Հոբն իր տառապանքի մեջ խորապես հասկանում է իր ամբողջ թշվառությունը՝ որպես մարդ արարած, և սակայն, այդքան տառապելով հանդերձ՝ երես չի թեքում Աստծուց, այլ վստահ է, որ Տերն իրեն արդարացնելու և փրկելու է: Սբ. Հովհաննես Պողոսը Հոբի տառապանքը համարում է մի մարգարեություն՝ մեծագույն արդարի՝ Հիսուսի տառապանքների մասին, որոնք բացարձակապես առանց մեղքի էին, բայց Հոբից տարբերվում էին նրանով, որ Հիսուս լիովին գիտակցում էր, թե ինչի համար է տառապում և կամավոր խմեց իր տառապանքի բաժակը, որպեսզի կատարի Հոր կամքը. Հիսուս իր չարչարանքները կրեց ոչ թե սեփական մեղքերի պատճառով, որոնք ի սպառ բացակայում էին Նրա մարդկային բնությունից, այլ՝ Իր բոլոր քույրերի և եղբայրների՝ յուրաքանչյուր մարդ արարածի մեղքերի պատճառով կամ՝ մարդկության փոխարեն՝ որպես հատուցում, փրկագին, որն Ի՛նքը միայն կարող էր վճարել բոլորի փոխարեն և բոլորի փրկության համար: «*Քրիստոս իր կամավոր չարչարանքով ոչ միայն ընդունում և արտահայտում է տառապանքի մասին բոլոր մարդկանց հուզող հարցը, այլև այդ հարցին տալիս է բոլոր հնարավոր պատասխաններից մեծագույն պատասխանը*», Salvifici doloris, 4: Եվ այդ հարցի պատասխանն է՝ Քրիստոսի Խաչը, որը միաժամանակ լրումն է՝ Տիրոջ ամբողջ Ավետարանի ուսմունքի: Քրիստոս մարդկային տառապանքի հիմնարար հարցի լուծումն առաջարկեց գտնել Իր Խաչի մեջ, այսինքն՝ տառապանքը հասկանալ *զոհաբերվող սիրո լույսի* ներքո, այլ խոսքով՝ որպես Աստծո և մերձավորի հանդեպ ի սպառ սիրո արտահայտություն, որպես հատուցում կատարող, քավչարար գործողություն, և ինչքան ամբողջական ու անմնացորդ լինի տառապանքը, այնքան ավելի՛ պտղաբեր կլինի, ճիշտ ինչպես Քրիստոսի Խաչը եղավ և է՛ հավիտենապես պտղաբեր: «*Քրիստոսի չարչարանքների մեջ մարդկային տառապանքը հասավ իր գագաթնակետին* (քանի որ նախ՝ Քրիստոս դրանք կրեց կամովին՝ մերձավորի փոխարեն, երկրորդ՝ կրեց որպես Աստծո Միածին Որդի՝ իջնելով իր աստվածային բարձունքից և կրեց բոլորովին առանց վաստակելու դրանք): *Միաժամանակ, մարդկային տառապանքը մտավ բոլորովին նոր չափման մեջ, նոր որակի մեջ. այն կապվեց սիրո հետ ... այն սիրո, որ բարիք է գործում՝ այն դուրս բերելով տառապանքի միջից, այնպես՝ ինչպես աշխարհի քավության բարձրագույն բարիքը դուրս բերվեց Քրիստոսի Խաչից»,* նույն տեղում: Սբ. Հովհաննես Պողոսը վստահ է, որ մարդկային տառապանքի մասին մշտական հարցը պետք է վերստին տանք Քրիստոսի Խաչի խորհրդի լույսի ներքո և ուշադիր *նայենք* Քրիստոսի Խաչի ամենախորքը՝ որպեսզի գտնենք այդ հարցի պատասխանը:

Այդ պատասխանը գտնելու և հասկանալու համար հարկավոր է նաև *գնալ* Քրիստոսի խաչի ճանապարհով՝ կյանքի բոլոր տառապանքները իմաստավորելով՝ որպես Քրիստոսի հետ խաչակրություն, չարչարանակցություն և մահացում, ինչպես գրում է Պողոսը, որպեսզի կարողանանք դրանցից բարիք հանել՝ թե՛ մեզ, թե՛ ուրիշների համար: Քրիստոս Իր

տառապանքով իմաստավորեց և փրկագնեց մարդկային տառապանքը. «*Տառապանքի միջոցով կատարելով մեղքերի քավությունը՝ Քրիստոս մարդկային տառապանքը բարձրացրեց քավության մակարդակին»,* նույն տեղում, 5: Այդպիսով, Տերը, կարծես, վերաիմաստավորված մարդկային տառապանքը նվիրեց մեզ՝ որպես հնարավորություն մասնակցելու Ի՛ր տառապանքին և այդպիսով ստանձնելու մեղքերի համար հատուցում կատարելու *մեր բաժինը՝ որպես մասնակցություն իր փրկարար տառապանքին*, որը փրկում է և՛ տառապողին, և՛ նրան, ում համար տառապանքը կրում ենք՝ որպես քավության և հատուցման ձև:

Պողոսի և մյուս աշակերտների նամակներով և օրինակներով ամրացած՝ առաջին քրիստոնյաները համբերությամբ և ուրախությամբ կրում էին ոչ միայն իրենց առօրյա դժվարությունները, հիվանդությունները, այլև՝ անհավատ աշխարհի ատելությունը, թշնամանքը, հալածանքները, ծաղրը, զրպարտությունները, անմարդկային լկանքներն ու մահապատիժները, և այս ամենը՝ *հանուն Քրիստոսի և հանուն Նրա հետ միասին հաղթանակի*, որ Հարության հույսն էր, որ երբեք չի ամաչեցնում, ինչպես գրում է Պողոսը. նրանք վստահ էին, որ Քրիստոսի հետ միասին տառապելով՝ Նրա հետ էլ հաղթելու էին մեղքին և ապա՝ հավիտենական մահվանը, իսկ ժամանակավոր մահը միայն տեղափոխություն էր Երկինք: Նրանք մահն էլ կրում էին համբերությամբ՝ որպես հատուցում և քավություն: Այսպիսի նոր իմաստ ստացավ տառապանքը Քրիստոսի աշակերտների համար. տառապանքը, դժվարությունը քրիստոնեության մեջ *հնարավորություն է, նոր հեռանկարի, նոր կյանքի սկիզբ, ինքնամաքրման սկիզբ և ազդարարություն:* «Ապաշխարեցե՛ք, որպեսզի դուք էլ նույնպես չկորչեք», ասում է Հիսուս՝ այն հրեաներին, որոնք մտածում էին, թե դժբախտությունների ենթարկված գալիլիացիներն ավելի մեղավոր էին, քան իրենք: Յուրաքանչյուր մեկի ցավը, աղետը, կորուստը մեզ համար պետք է լինի ազդանշան՝ ապաշխարելու, հատուցման, մեղքերի քավության գործեր կատարելու կամ մեզ բաժին ընկած դժվարությունները վերաիմաստավորելու և դրանք որպես հատուցում կրելու: Միա՛յն այդպես կարելի է մարդկային տառապանքը կրել ուրախությամբ, որովհետև այդպես այն դառնում է *սիրո գործ:*

Տառապանքը մարդու կողմից Աստծուն ընծայված լավագույն նվերն է

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց

Երբ տառապանքը, դժվարությունը կրում ենք Քրիստոսի հետ միասին և նրա նման՝ ապաշխարության և հատուցման դիտավորությամբ, այն դառնում է սիրո գործ, քանի որ միանում է Քրիստոսի ի սպառ սիրո տրամաբանությանը, ինչպես վտակը սնվում է գետից: Տառապանքն այս դեպքում դառնում է Աստծո և մերձավորի հանդեպ սիրո արտահայտություն, այն սիրո, որով Քրիստոս կրեց Ի՛ր տառապանքը, այն սիրո, որը *լիովին իմաստավորում է* տառապանքը. այն այլևս անհասկանալի և անհեթեթ չէ մարդու համար, թեև հաճախ անսպասելի է, բայց այլևս մարդը պատրաստ է այն կրելու՝ հանուն հստակ նպատակի, ընդունում է այն՝ որպես միջոց և ոչ թե վերջնական և ճնշող մի տրվածություն, որը, նախկինում կարող էր իրեն նետել անհուսության անդունդը, որտեղից հաճախ ելքեր չէր գտնում: Ավելին, Քրիստոսի սիրո և քավության տրամաբանությամբ՝ մարդը կարողանում է տառապանքը, որն ինքնին չարիք է, դարձնել սիրո ճանապարհ և գործիք, ինչպես Քրիստոս խաչը մահապատժի գործիքից վերածեց սիրո գործիքի, մահաբեր գործիքը դարձրեց կյանքի մշտաբուխ աղբյուր: Բայց տառապանքը այս իմաստով կրելը մեզ համար հնարավոր է դարձնում միայն Քրիստոս Ի՛նքը, քանի որ նախ Ի՛նքը եկավ մասնակցելու մարդկային տառապանքին, ինչպես գրում է Սբ. Հովհաննես Պողոս Բ-ը. «*Մարդը դառնում է Քրիստոսի չարչարանքների մասնակից՝ այն պատճառով, որ Քրիստոս բացեց իր տառապանքները մարդու առջև, որովհետև Նա Ի՛նքն Իր քավչարար տառապանքի միջոցով մասնակից դարձավ մարդկային տառապանքին: Մարդը հավատքի միջոցով բացահայտելով Քրիստոսի քավչարար տառապանքը, որոշակի իմաստով այդ տառապանքի մեջ գտնում է նաև ի՛ր տառապանքը. հավատքի միջոցով մարդը վերստին բացահայտում է սեփական տառապանքը՝ հարստացած նոր բովանդակությամբ և նոր իմաստով»,* Salvifici doloris, 5*:*

Քրիստոս իր չարչարանքով ու Խաչով այնքա՞ն է բաց և մոտ մարդուն, որ Սբ. Պողոսը զգալով դա հատկապես ի՛ր տառապանքների մեջ, գրում է գաղատացիներին.

«*Ես խաչվել եմ Քրիստոսի հետ, և արդեն ոչ թե ես եմ ապրում, այլ՝ Քրիստոս ապրում է իմ մեջ: Իսկ որ հիմա ապրում եմ մարմնի մեջ, ապրում եմ Աստծո Որդու հանդեպ հավատքով, որ սիրեց ինձ և Ինքն Իրեն մատնեց ինձ համար»,* Գաղ. 2, 19-20: Հավատքը Պողոսին օգնում է ճանաչել այն անձնվեր սերը, որով Հիսուս սիրում է իրեն և բնակվում է իր մեջ: Միությունը, որի միջոցով Քրիստոս բնակվում է Պողոսի մեջ և բոլոր նրանց մեջ, ովքեր հավատում են և կիսում Քրիստոսի տառապանքները, հաստատվում է Քրիստոսի Խաչի կամ սիրո հիմքի վրա, այլ խոսքով՝ Քրիստոսի

տառապանքի միջոցով: Ուրեմն, տառապանքը հիմք է դառնում՝ մարդու և Աստծո Որդու միության համար, կամ՝ Քրիստոսի տառապանքը, որը մարդը հանձն է առնում կիսել՝ իր տառապանքի բաժինը կրելով՝ որպես մասնակցություն Քրիստոսի տառապանքին, դառնում է այն կիզակետը, որտեղ ամենաներդաշնակ ձևով մարդը միանում է Աստծո Որդու հետ, կամ մարդը նմանվում է Քրիստոսին՝ Կատարյալ Մարդուն, որ ունի Աստծո ամբողջ բարեհաճությունը: Դրա համար է Պողոսն ուրախանում և պարծենում Խաչով. «*Քավ լիցի ինձ՝ պարծենալ որևէ այլ բանով, քան՝ միայն Քրիստոսի Խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, և ես՝ աշխարհի համար*», Գաղ. 6, 14:

Քրիստոսի ներկայությունը մարդու մեջ՝ տառապանքի միջոցով, իր հետ բերում է ոչ թե անհուսություն, տառապանքի առավել ծանրություն, այլ ճիշտ հակառակը՝ տառապանքը դառնում է քաղցր մի բեռ.

«*Եկե՛ք ինձ մոտ՝ բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Ձեր վրա վերցրե՛ք իմ լուծը ... որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև*», Մտթ. 11, 28-29: Քրիստոսի բեռը քաղցր ու թեթև է, որովհետև այն մարդու ուսերին դրվում է մեղքի և ընդհուպ մահվան հաղթահարման, Հարության իրական հնարավորության հետ միասին՝ այն «*հույսի, որը երբեք չի ամաչեցնում*», այդ բեռը մի տառապանք է, որը խոստանում է գալիք աննկարագրելի մխիթարություն. «*Մենք Քրիստոսի հետ ժառանգակիցներ ենք՝ եթե միայն Նրա հետ տառապում ենք, որպեսզի Նրա հետ էլ փառավորվենք: Որովհետև կարծում եմ, որ ներկայիս ժամանակավոր տառապանքները ոչինչ չարժեն՝ այն փառքի համեմատ, որ հայտնվելու է մեր մեջ*», Հռմ. 8, 17-18, իսկ կորնթացիներին գրում է. «*Մեր ներկայիս ժամանակավոր նեղությունը արտակարգ գերազանց և հավիտենական փառք է ապահովում մեզ համար: Մենք մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք ոչ տեսանելի բաների վրա, որովհետև տեսանելի բաները ժամանակավոր են, իսկ անտեսանելի բաները՝ հավիտենական*», Բ Կորնթ. 4, 17-18:

Քրիստոս Իր չարչարանքով մարդկության համար ապահովեց չարիքը վերջնականապես արմատախիլ անելու, աշխարհի մեղքը վերջնականապես վերացնելու հնարավորությունը: Քրիստոս մարդու առջև իր տառապանքով բացեց Աստծո Արքայություն մտնելու ճանապարհը, որը սակայն մարդու համար ևս պետք է անցնի տառապանքով, եթե մարդը համերաշխ և հաղորդ է Քրիստոսի հետ. «*Բազում նեղություններ կրելո՛վ է, որ պետք է մտնենք Երկնքի արքայություն*», Գործք. 14, 22:

Քրիստոս գալիք փառքի հույսը, հաղթանակի կանխազգացումը մարդուն տալիս է *արդեն իսկ տառապանքի խորքում*՝ որպես հողի մեջ դրված ցորենի հատիկ, հուսահատության անդնդի մեջ, ինչպես Իր Հարության փառքն է թաքնված Իր տառապանքի անդնդում՝ մութ գերեզմանի մեջ: Քրիստոս Իր մահով իջնում է մարդկային տառապանքի գուբը՝ մարդուն այնտեղ տալու իր աստվածային վիթխարի զորությունը և վերածնվող կյանքի հույսը, որ հորդում է իր Խաչի կենտրոնից՝ Իր տիգախոց Սրտից, Իր տառապյալ Սիրո անսպառ աղբյուրից: Քրիստոս մարդուն խմեցնում է իր Հոգու զորությունը՝ հենց մարդկային տկարության մեջ, ինչպես բժիշկը դեղ է խմեցնում հիվանդին՝ մահճում պառկած: Այս է պատճառը, որ Պողոսը պարծենում է նաև իր տկարությունների մեջ՝ գրելով. «*Ես առավել մեծ սիրով կպարծենամ իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ բնակվի Քրիստոսի զորությունը*», Բ Կորնթ. 12, 9: Եվ ավելացնում է, թե ինքն ուժեղ է այն ժամանակ, երբ տկար է:

Երբ մարդ տառապում է՝ որպես Քրիստոսի հետ խաչակրություն, Նրա քավչարար տառապանքին մասնակցություն, Քրիստոս տալիս է հարկ եղած հոգևոր և բարոյական ներուժը, կամքը՝ տոկալու մինչև վերջ, հատուցում կատարելու ի սպառ, խմելու տառապանքի բաժակը ցմրուր, որովհետև այդպիսի տառապանքը բարիքի համար է՝ լինի տառապողի, թե մեկ այլ անձի համար: Նա, ով տառապում է Քրիստոսի հետ և Նրա նման, Տերը երբեք միայնակ չի թողնի: Ուրեմն, միայն Քրիստոսի հետ միասի՛ն կարելի է լավագույն ձևով և արդյունքով տոկալ և հաղթահարել մեր բոլոր դժվարությունները. «*Ամեն ինչ կարող եմ՝ ինձ զորացնող Քրիստոսով*», Փլպ. 4, 13:

Աստծո Որդին, իջնելով մինչև մարդկային թուլության հատակը, մեխվելով Խաչի վրա՝ տառապող և մեղքի մեջ լքված մարդու հետ իր միությունը արտահայտող սաղմոսի բառերն արտաբերեց. «*Աստվա՜ծ իմ, ինչու՞ լքեցիր ինձ*»: Եվ ապա Աստծո Որդին այդ սարսափելի անդունդի միջից իր հարուցյալ մարդկային բնության հետ միասին վեր բարձրացրեց նաև անկյալ մարդությունը՝ վերականգնելով մարդկային արժանապատվությունը, քանի որ լիուլի վճարեց, հատուցեց դրա փոխարեն՝ իր չարչարանքներով և մահվամբ. «*Քրիստոս իջնում է մինչև մարդկային թուլության ամենավերջին սահմանները... Բայց եթե միաժամանակ այդ թուլության մեջ տեղի է ունենում Նրա բարձրացումը՝ հաստատված Հարության զորությամբ, ապա դա նշանակում է, որ մարդկային ամեն տառապանքի թուլությունը կարող է լցվել Աստծո այդ նույն զորությամբ, որը երևաց Քրիստոսի Խաչի մեջ: Այսպիսի մոտեցմամբ, տառապել՝ նշանակում է դառնալ հատկապես ընդունող, հատկապես բացված՝ Աստծո փրկարար զորությունների ներգործության առջև, որոնք առաջարկվել են մարդկությանը՝ Քրիստոսի միջոցով*», S. D., 5:

Աստված կամեցավ մարդուն առաջնորդել դեպի մեղքի հաղթահարում՝ հենց տառապանքի՛ միջոցով, տառապանքի, որը բաց է Աստծո ներգործության առջև, երբ մարդ ինքն իրեն մատնում է կամավոր տառապանքի կամ հանձն է առնում համբերատար ձևով և իմաստավորված տանել իր դժվարությունները, որպեսզի դրանց միջոցով Աստված մաքրի իրեն և ուրիշներին՝ փրկություն պարգևելով: Այսպիսով, մարդկային տառապանքը մի դուռ է՝ բացված Աստծո փրկարար ներգործության առջև՝ պայմանով, որ մարդը չտրտնջա իր տառապանքների մեջ, այլ կրի դրանք իմաստավորված,

ինչպես բացատրեցինք: Միա՛յն այդ դեպքում դժվարությունը կկոփի մարդուն, կզարգացնի համբերատարության առաքինությունը և կդառնա հոգևոր և բարոյական բարիքի աղբյուր:

Եվս մեկ խոր իմաստ կա՝ տառապանքը՝ որպես Քրիստոսի քավչարար տառապանքի մաս կրելու հանձնառության մեջ: Սբ. Պողոսը գրում է. «*Եվ հիմա ուրախ եմ չարչարանքներիս մեջ՝ ձեզ համար և մարմնիս մեջ ամբողջացնում եմ Քրիստոսի վշտերի պակասը՝ ի նպաստ Նրա մարմնի, որ Եկեղեցին է*», Կող. 1, 24: Նա, ով գիտակցաբար իր տառապանքով մասնակցում է Քրիստոսի տառապանքին, ամբողջացնում կամ լրացնում է Քրիստոսի չարչարանքները՝ Եկեղեցու համար: Ի՞նչ է սա նշանակում: Միթե՞ Քրիստոսի չարչարանքները կամ քավչարար հատուցումը վերջնական չեն: Իհարկե, վերջնական են և մեկընդմիշտ կատարված՝ ամբողջ մարդկության համար՝ թե անցյալի և թե գալիք դարերի, բոլոր նրանց համար, ովքեր կմկրտվեն և կհավատան Քրիստոսին: Բայց Քրիստոս, այնուամենայնիվ, ուզում է այն *հասցնել վերջնական կատարելությանը՝ մարդու ազատ և գիտակից մասնակցությա՛ն միջոցով*: Քանի որ մկրտվողները հոգևոր իմաստով դառնում են Քրիստոսի խորհրդավոր Մարմնի, այսինքն՝ Եկեղեցու անդամները կամ Նրա Սուրբ Ընտանիքի անդամները, միաժամանակ ստանձնում են առաքելություն՝ մշտապես շարունակելու և վերջնական ավարտին հասցնելու Քրիստոսի քավչարար առաքելությունը՝ մասնակցելով նրա չարչարանքներին՝ սեփական տառապանքով կամ ուրույն խաչակրությամբ. Հայրը կամենում է, որ իր բոլոր զավակները կիսեն Իր Միածին Որդու փրկարար տառապանքը՝ մեղքը հաղթահարելու համար, շարունակեն նրա հատուցման գործը և միշտ կատարեն այն, ինչ կատարեց և շարունակում է կատարել Հիսուս՝ Անդրանիկը բազում եղբայրների մեջ, որի հետ յուրաքանչյուրս մտնում ենք հոգևոր հարազատության կապի մեջ՝ Մկրտության, Դրոշմի և Սբ. Հաղորդության միջոցով: Եկեղեցին՝ որպես Քրիստոսի ընտանիք, շարունակում է Նրա քավչարար գործը. «*Ըստ էության, Եկեղեցին, որը մշտապես օգտագործում է Քրիստոսի քավության անսահման ռեսուրսները՝ ընծայելով դրանք մարդկությանը, այն հարթությունն է, որտեղ Քրիստոսի քավչարար տառապանքները կարող են մշտապես լրացվել մարդու տառապանքով*», S. D., 5:

Եկեղեցին՝ որպես Քրիստոսի փրկագործության շարունակող, անշեղորեն հավատում է թե՛ Քրիստոսի քավության զորությանը, որ ի վերջո փոխելու է ամբողջ աշխարհը, և թե՛ հավատացյալների կատարած քավության զորությանը, դրա համար էլ մշտապես մեծ ակնածանքով է վերաբերում մարդկային յուրաքանչյուր տառապանքի, որ առաջարկվում է՝ որպես «*բանական զոհ*»՝ ի նմանություն Քրիստոսի:

Վերը բերված խոսքերը նշանակում են ևս մեկ բան. եթե ուզում ենք, որ մեր տառապանքը ընդունվի հայր Աստծո կողմից՝ որպես մասնակցություն Իր Որդու տառապանքներին և կրի քավչարար առաքելության կնիքը, այդ տառապանքը պետք է *ապրենք Քրիստոսի Եկեղեցու ծոցում* և *Քրիստոսի հետ միասին*՝ լիակատար ձևով կառչած մնալով եկեղեցական խորհուրդներին՝ մանավանդ, Ապաշխարության և Սբ. Հաղորդության խորհուրդներին: Միա՛յն Եկեղեցու ծոցում՝ Քրիստոսի հետ և մեր մյուս եղբայրների ու քույրերի հետ միասին, միմյանց հանդեպ սիրով և միասնական աղոթքո՛վ կարող ենք առաջարկել մեր տառապանքը՝ որպես հատուցում՝ Քրիստոսի նման, որպես ընծայաբերություն, զոհ՝ այն միացնելով Քրիստոսի Զոհին, որ Սուրբ Պատարագն է: Եկեղեցուց դուրս, Քրիստոսից հեռու, առանց Պատարագին մասնակցելու՝ անհնար է տառապանքդ ապրել որպես հատուցում և բարիք ակնկալել դրանից: Նույնիսկ եթե հիվանդության պատճառով ի վիճակի չես լինել Եկեղեցում և մասնակցել Պատարագին, հարկավոր է ապրել Պատարագը՝ հոգևոր հաղորդության մեջ, և քահանան կապահովի իրական Սբ. Հաղորդության ճաշակումը՝ քո տան մեջ, թեկուզ անկողնում գամված: Քրիստոս Ի՛նքը կգա քեզ մոտ, եթե միայն կամենաս:

Ուրեմն, եկե՛ք մեր յուրաքանչյուր դժվարություն, ցավ՝ թեկուզ փոքր, նվիրենք Հորը՝ Քրիստոսի հետ միասին: Վստահ եմ՝ յուրաքանչյուրս էլ ունենք մի ցավ, որ կարող ենք նվիրել Աստծուն, դարձնել գիտակցված զոհ, որից Աստված Ի՛նքը մի բարիք կհանի՝ մեզ և մեր մերձավորների համար: Եկե՛ք գիտակցենք, որ յուրաքանչյուրս կարող ենք իրապես մասնակցել աշխարհի քավության գործին, որ միշտ կատարում է Քրիստոս: Եվ նա ուզում է այդ գործը կատարել մեր օգնությամբ՝ Իր Եկեղեցու միջոցով: Սա միասնական գործ է, և այստեղ կարևոր է յուրաքանչյուրիս թեկուզ չնչին ներդրումը, փոքր տառապանքը՝ բայց կատարված մեծ սիրով:

Հիշե՛նք մի պարադոքսալ, բայց փրկարար ճշմարտություն. *Աստծո համար մեր տառապանքը լավագույն նվերն է*, որ կարող ենք ընդհանրապես մատուցել Տիրոջը, որովհետև այն մեր հավատքի, հույսի և սիրո լավագույն գրավականն է: Թող լինի՛ այդպես:

Տ. Հովսեփ

24.03.2022

Ինչպե՞ս կարելի է տառապանքը և դժվարությունները նվիրել Աստծուն

Հոգևոր կրթություն Մեծ Պահոց

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ, շարունակելով տառապանքի մասին մեր խորհրդածությունը՝ վերստին հստակեցնենք, որ Տեր Հիսուս Քրիստոս աշխարհի մեղքը քավեց կամ դրա դիմաց հատուցում կատարեց Իր տառապանքի միջոցով, հետևաբար մարդկային տառապանքի խորագույն իմաստը կարող է բացահայտվել՝ տառապանքը՝ որպես Քրիստոսի քավչարար գործին մասնակցություն, կրելու միջոցով: Սա՛ է տառապանքի իմաստն այս աշխարհում: Սա է ադամական մեղքի հետևանքը և այդ մեղքը հաղթահարելու միակ ճանապարհը: Մեղքը և մահը հաղթահարվում է որպես հատուցում

կատարվող տառապանքի միջոցով: Այս իմաստով ամեն տեսակ դժվարություն, որ տառապանք է պատճառում մարդուն, կարող է և պետք է ընկալվի որպես հատուցման և քավության հնարավություն կամ հրավեր: Եթե հատուցման իմաստը հանում ենք տառապանքից, այն դառնում է լիովին անհասկանալի և անօգուտ: Այս պարագայում տառապանքը դառնում է միայն ծանր բեռ՝ տառապյալի համար, տառապյալն ինքն էլ դառնում է բեռ՝ ուրիշների համար, որովհետև չգիտի՝ ինչու է տառապում և ինչպես կրել իր տառապանքը: Նույնիսկ երեխային, երբ բացատրում ենք, թե անհրաժեշտ է սովորել հաղթահարել դժվարությունները, տառապանքը, երեխան չի ուզում հասկանալ և ընդունել տառապանքի անխուսափելիությունը, մինչև չփորձենք դրա իմաստը նրան բացատրել հոգևոր տեսանկյունից՝ որպես ադամական մեղքի հետևանք և որպես հնարավորություն՝ կոփվելու հոգևոր մարտում, հատուցումներ կատարելու, մասնակցելու Տիրոջ քավության գործին, սեփական անձի համար և ուրիշներին դրանից բարիք հանելու: Կարծում եմ, վաղ տարիքից երեխայի պետք է բացատրել այս ճշմարտությունները՝ իրեն հասկանալի լեզվով, որպեսզի երեխան սովորի իր դժվարությունները հաղթահարել նպատակային ձևով, չընկճվի դրանցից, նույնիսկ՝ կրթության դժվարությունները:

Առավել ևս այս մասին պետք է խոսել առողջական խնդիրներ ունեցող անձանց հետ՝ թե երեխաների և թե մեծահասակների, ովքեր ծանր կամ անբուժելի հիվանդությունների մեջ պայքարում են կյանքի համար: Հաճախ անհարմար է խոսել հարմարավետ դիրքից, խորհուրդներ տալ՝ լինելով առողջ և առանց հիվանդության կամ այլ տառապանքի բեռի: Դրա համար Հիսուս մեզ պատվիրում է կրել միմյանց բեռները՝ հետևելով Իր օրինակին, ավելին ասում է. «*Եթե մեկն ուզում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ ետևից*», Ղկ. 9, 23: Որպեսզի կարողանանք մեր տառապանքը, դժվարությունները կրել կամ միմյանց օգնել դրանք կրել, մեր հայացքն անընդհատ պետք է ուղղենք Խաչյալ Քրիստոսին, որ ուզում է իր Խաչի վրայից պատասխանել մեր հիմնարար, մշտական հարցին՝ թե *ինչու ենք տառապում:* Բայց Հիսուս վերացական և տեսական պատասխան չի տալիս, Հիսուս Ուսուցիչ է, բայց՝ Իր կյանքի՛ օրինակով է սովորեցնում. Նա, կարծես, Իր խաչի վրայից ասում է.

«*Ուզու՞մ ես հասկանալ տառապանքի իմաստը, արի՛ իմ ետևից, միացիր ինձ, ինձ հետ միասին կրի՛ր ամենօրյա դժվարություններիդ, տառապանքիդ խաչը և դրա իմաստը կհասկանաս ճանապարհին, Գողգոթա բարձրանալիս և խաչվելիս, դժոխքի խորքն ինձ հետ միասին իջնելիս և հաղթանակած դուրս գալով, Իմ տառապանքներին մասնակցելո՛վ և դրանք շարունակելո՛վ միայն: Նվիրի՛ր ինձ քո տառապանքը, ե՛կ միասին կրենք իմ և քո խաչերը, սրտիդ մեջ միացրու՛ քո խաչը՝ իմ խաչին, կրի՛ր քո խաչը՝ նույն նպատակի համար, որի համար ես կրեցի և շարունակում եմ կրել՝ քո՛ և մարդկության մեղքերի դիմաց հատուցելու համար, տառապանքով վճարելու համար, որպեսզի դու և քո եղբայրները, քույրերը ազատվեք հավիտենական դատապարտությունից, մեղքի գերությունից և սատանայի իշխանությունից: Երբ խաչդ կրես ինձ հետ միասին, այս աշխարհի իշխանի գլուխը կտրորվի վախից, դու քո տառապանքով կհաղթես նրան, ինչպես ես հաղթեցի: Ուրեմն, քաջալերվի՛ր և կգտնե՛ս պատասխանը*»:

Յուրաքանչյուր քրիստոնյա մկրտվելիս և դրոշմվելիս՝ սկսում է կրել Քրիստոսի խաչն իր սրտում, ապա՝ խաչի պատկերն՝ իր պարանոցին, տանը, տեսնում է եկեղեցում: «Քրիստոսի խաչն աշխարհի ամենաիմաստուն գիրքն է», ասում էր Հիերոնիմոս Երանելին:

Քրիստոսի Խաչը կտա մեր բոլոր հարցերի պատասխանները, եթե սկսենք տանել այն մեր ուսերին, կամ՝ մեր դժվարությունները դարձնենք խաչակրություն: Սա նշանակում է Քրիստոսի գերբնական զորությամբ *հիմքից վերափոխել* տառապանքի իմաստը, ինչ տեսքով էլ այն մեր առջև ծառանա, լինի՝ մեր սեփական մեղքերի հետևանքով, թե բնական հիվանդության, բնական աղետի, հարազատի կորստյան, պատերազմի և այլն: Յուրաքանչյուր դժվարություն և տառապանք մի փորձություն է մարդու համար և մարտահրավեր՝ դրանք դարձնելու սեփական անձի և ուրիշների համար բարիք գործելու հնարավորություններ: Քրիստոնեության պատմությունը լի է այդպիսի անձանց վկայություններով՝ սկսած ամենաառաջին օրինակներից՝ Սբ. Կույս Մարիամից և Սբ. Հովսեփից, որ Քրիստոսի հետ միասին կրեցին տառապանքներ՝ կիսելով իրենց զավակի տառապանքը՝ դեռ ներարգանդային կյանքի առաջին վայրկյաններից սկսած: Մարիամը լսեց Սիմեոն ծերունու առեղծվածային մարգարեությունը, որից կարելի է սարսափել, եթե չհասկանանք, որ այդ խոսքերը բնորոշում էին Մարիամի ճակատագիրը՝ կիսելու իր Որդու տառապանքը, որից բարիք էր ծնվելու. «*Եվ քո սրտի միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան*», Ղկ. 2, 35: Սուրբ Ընտանիքի դեգերումները՝ որպես անտուններ, Հիսուսի ծնունդը քարայրում, նրանց փախուստը դեպի Եգիպտոս, մանուկ Հիսուսի երեքօրյա կորուստը, ապա երեսնամյա Հիսուսի քարոզության սկիզբը Գալիլեայում՝ անհասկացողության մթնոլորտում, ատելության կուտակումը և մահվան սպառնալիքը Հիսուսի հանդեպ, ի վերջո ձերբակալումը, խաչի ճանապարհը և խաչելությունը: Ահա՛, վշտակիր Մարիամը կանգնած է իր Որդու խաչի տակ՝ լուռ հեկեկալով, տեսնում է իր որդու հոգևարքը, մահը, ապա Նրան իր գիրկն են տալիս և նորից վերցնում ու դնում

գերեզման: Մարիամն այս ամենը կրում է ամենայն խոնարհությամբ, համբերությամբ, որովհետև ի սկզբանե գիտեր, որ իր սրտով սուր պիտի անցնի: Եկեղեցին դարեր շարունակ և այսօր էլ Մարիամին նայում է որպես տառապանքի մեծ ուսուցչուհու՝ հենց այն պատճառով, որ եզակի և արտոնյալ կերպով կիսեց իր Որդու քավչարար տառապանքը: Ինչպես Հիսուսին կրեց իր սրտի տակ՝ մայրական արգանդում, այնպես էլ կրեց Նրա տառապանքի սուրը՝ իր սրտի մեջ, իր տառապանքը միացրեց որդու տառապանքին և այդպիսով իմաստավորեց սեփականը: Կանգնել Մարիամի հետ միասին՝ Քրիստոսի Խաչի տակ. սա՛ է մեզ տանջող հարցերի պատասխանը գտնելու ամենավստահելի ձևը: Սբ. Հովհաննես Պողոս 2-րդը գրում է. «*Մարիամի՝ Քրիստոսի մոր հետ միասին, որ կանգնած էր Խաչի տակ, մենք կանգ ենք առնում մեր ժամանակների մարդու բոլոր խաչերի առջև»,* Salvifici doloris, 8:

Մարիամի օրինակով և Քրիստոսի Խաչի լույսի ներքո քրիստոնյաների, սրբերի շատ սերունդներ կարողացան իմաստավորել սեփական տառապանքները՝ սկսած Հռոմեական կայսրության հալածանքների նահատակներից մինչև մոր օրերի նահատակները, հավատքի նվիրյալները, պարզ մարդիկ, ովքեր իրենց առօրյա դժվարություններն ապրում են հավատքով, կրում են համբերությամբ և նաև կարողանում են սիրել ուրիշներին, մխիթարել նրանց, սեփական դժվարությունները կրել նաև հանուն եղբոր, քրոջ առողջության, մեղքերի դիմաց հատուցման, ծանր մեղավորների դարձի գալու դիտավորություններով:

Որքա՜ն մեծ հոգևոր ուժ կա այն պարզ աշխատավորների մեջ, ովքեր հավատքով և համբերությամբ կրում են իրենց աշխատանքի ծանրությունը, գործատուների անարդարությունները, աշխատավարձի պակասը և դրանից բխող սոցիալական բարդություններն ընտանիքում, և այդ ամենը տանում են աղոթքով, միշտ մասնակցելով Սբ. Պատարագներին:

Որքա՜ն մեծ հոգևոր ներուժ կա կարիքի մեջ ապրող ընտանիքներում, որը չունի աշխատանքի և եկամտի բավարար հնարավորություններ, սեղանին մշտապես հաց ունենալու մտավախություն, տագնապ, ջեռուցման խնդիրներ՝ ձմռան ցրտի ժամանակ, բայց կա մեծ հավատք և հույս՝ ապագայի հանդեպ, հավատք, որը ջերմանում է Հիսուսի ջերմությամբ, երբ մայրը և երեխաները գիտեն ժամանակ նվիրել Հիսուսի հետ զրույցին, Հիսուսի Սբ. Պատարագին, ծունկի գալ Սբ. Հաղորդության առջև:

Որքա՜ն մեծ հոգևոր ներուժ կա ծանր հիվանդություններով տառապողների ամուր սրտերում, ովքեր մեծ համբերությամբ կրում են իրենց ցավերը, մարմնական տկարությունները և գիտեն դրանք տանել որպես խաչ՝ Քրիստոսի հետ միասին, ովքեր, թեկուզ, անկուղնում գամված, մշտապես իրենց մատների արանքում ունեն Տիրամոր Վարդարանը, և աղոթքը չի դադարում նրանց շուրթերից և նրանք ուրախ են, որովհետև գիտեն, որ «Տերը մոտ է», Փիլ. 4, 5:

25.03.2022

Տ. Հովսեփ

«Քեզ համար, Հիսու՛ս».
Երանելի Քիարա Լուչեի տառապանքը

«Ես ձեզ որբ չեմ թողնի, կգամ ձեզ մոտ», Հվի, 14, 18

Հիվանդանոցի բակը վաղուց մարդաշատ էր, կեսօրն անցել էր, օրն արևոտ էր ու պայծառ: Մարիա Բադանոն նստել էր ծառի տակ՝ նստարանին, ու հետևում էր դստերը՝ Քիարային: Քիարան՝ գեղեցիկ, լուսե աչքերով տասնյոթամյա մի դեռահաս, զբոսնում էր հիվանդներից մեկի հետ: Մարիան ժպտում էր ամեն անգամ, երբ տեսնում էր դստերը՝ ծիծաղելիս և աշխույժ խոսելիս: «Ծիծաղը նրան շատ է օգտակար, կշեղի հիվանդությունից, բայց…չի կարելի այդքան երկար քայլել, բժիշկն էլ ասաց երեկ: Երևի հոգնել է արդեն, մեջքն էլ, գիտեմ, որ շատ է ցավում, ախր… ինչպե՞ս ասեմ, որ գնա պառկի, չգիտեմ, բայց ինչպե՞ս է կարողանում այդ ցավը մոռանալ ու զրուցել, ծիծաղել: Շա՜տ ուժեղ է աղջիկս»,-մտածում էր Մարիան:

Իսկ Քիարան արդեն մի քանի ժամ է՝ զբոսնում էր մի հիվանդի հետ, որը մոտավորապես իր տարիքի մի աղջիկ էր, ում կյանքը դեղերից էր կախված և մշտապես ընկճված հոգեվիճակում էր: Քիարան իր պարտականությունն էր համարում սփոփել նրան, ինչպես և մյուս հիվանդներին, բայց իր վիճակը շատերից ավելի վատ էր. Քիարան տառապում էր ոսկրի քաղցկեղ հիվանդությամբ: Հիվանդությունը նրա մոտ ախտորոշվել էր 17 տարեկանում՝ 1989թ. հուլիսի 19-ին: Այդ օրը մայրը չէր մոռանում: Մի քանի ամիս էր արդեն անցել այդ սարսափելի օրվանից: Քիարայի մարմինը օր օրի ջլատվում էր, բայց ոգին միայն գոտեպնդվում էր և նա է՛լ ավելի էր ջանում օգտակար լինել մերձավորին ու սիրել մարդկանց: Քիարան շատ աստվածավախ աղջիկ էր:

Մարիան որոշեց ի վերջո կատարել իր մայրական պարտքը և մոտեցավ անդադար խոսող դստերը.

-Քիարա՜, անուշի՜կս, կհոգնես, շատ երկար զբոսնեցիր, մի քիչ հանգստացի՜ր, հետո նորից դուրս կգաս,-խնդրեց Մարիան:
-Ես հետո կհանգստանամ, մամ,-անտարբեր ասաց Քիարան ու շարունակեց զրույցը:
Քիարան զգում էր, որ մեջքի ցավից ուր որ է՝ աչքերը կարցունքապատվեն, բայց որոշել էր ուշադրություն չդարձնել ցավին ու զրուցել, թեթևացնել ընկերուհու ցավերը:
Քիարայի համար բոլորը՝ ովքեր ինչ-որ ցավ ունեին, իր ընկերներն էին: «Սերն ավելի կարևոր է, քան վախը»,-միշտ կրկնում էր Քիարան, երբ փորձում էին նրան հոգեպես հանգստացնել, որ չվախենա ցավերից ու մահից, որի մասին, իհարկե, չէին խոսում, բայց բժիշկները վստահ էին, որ մահը Քիարայի համար արդեն անխուսափելի էր: Քիմիաթերապիան շատ ցավոտ էր, մազերը սկսել էին փունջ-փունջ թափվել: Ամեն անգամ, երբ մազերը սանրելիս մի փունջ էր պոկվում, Քիարան ասում էր «Սա քեզ համար է, Հիսու՜ս»: Քիարան վստահ էր, որ այն ամենը, ինչ իր հետ պատահում էր, Աստծո կամքն էր և իր տառապանքները տոկունությամբ ու հնազանդությամբ էր տանում՝ ցանկանալով նմանվել Քրիստոսին: Նա մերժում էր մորֆին ընդունել, որ չլինի հանկարծ զգայնությունը թմրի. «Միայն մի բան կա, որ կարող եմ անել,-ասում էր նա,-տառապանքս առաջարկել Հիսուսին, որովհետև ես ուզում եմ կիսել խաչի վրա Նրա կրած տառապանքները, և ինչքան հնարավոր է, շա՜տ»:
Քիարայի հավատքը զարմանք ու հիացմունք էր առաջացնում շրջապատում: Հոգևորականները խոստովանում էին, որ նման ուժեղ ու հասուն հավատքով դեռահասներ չէին տեսել: Մի անգամ երբ մի կարդինալ էր այցելել Քիարային ու հարցրել, թե որտեղից է գալիս լույսը նրա հայացքում, Քիարան պատասխանել էր. «Ես ջանում եմ սիրել Հիսուսին այնքան շատ, ինչքան կարող եմ»:
Մայրը, տեսնելով, որ Քիարան անդրդվելի է, դարձյալ նստեց ծառի տակ, ու մտքերի մեջ ընկավ: Մարիան հիշում էր դստեր մանկությունը: Քիարան կատարյալ առողջ էր, կենսախինդ, սիրում էր խաղալ ընկերների հետ, դեմքին անընդհատ ժպիտ էր, ինչպես այդ զբոսանքի ժամանակ, երբ փորձում էր մոռանալ մեջքի ցավը: Փոքրիկ Քիարան միշտ փորձում էր ձեռք մեկնել բոլորին: Իր խաղալիքներն էր նվիրում տարեկիցներին և ասում. «ես, իհարկե, չեմ կարող կոտրված խաղալիքներ նվիրել, որովհետև այս երեխաներն խաղալիքներ ընդհանրապես չունեն»: Մարիա Թերեզայի դեմքին ժպիտ խաղաց դստեր այդ խոսքերը հիշելիս: Քիարան փոքրուց սիրում էր լսել Ավետարանից հատվածներ, ապա նաև՝ կարդալ, աղոթել ժամերով ու ընկերներին պատմել Հիսուսի մասին, մեծ հաճույքով ու ներքին պահանջով ներկա էր լինում Սուրբ Պատարագին ու ընդունում Սուրբ Հաղորդությունը, սիրում էր խնամել ծերերին ու հիվանդներին: 9 տարեկանում Քիարան անդամագրվեց «Ֆոքոլարե» կաթողիկէ շարժմանը, որի նպատակը քրիստոնեական արժեքների տարածումն էր աշխարհով մեկ: Քիարան ակտիվ մասնակցում էր շարժման միջոցառումներին, նրան ճանաչում էին որպես լուսավոր ու մեծ ապագա ունեցող մի աղջկա: Ֆոքոլարե շարժման ղեկավար տիկին Լյուբիքը, ում հետ Քիարան մշտական նամակագրություն ուներ, նրան կոչում էր «Լուչե», որ նշանակում է «լուսավոր»:
Մարիան հիշեց դստեր նամակը, որը Քիարան ուղարկել էր իրեն, երբ մասնակցում էր միջազգային երիտասարդական մի հավաքի: Քիարան գրում էր. «*Ես հայտնագործել եմ, որ Խաչի վրա լքված Հիսու՛սն է միության բանալին և ես ուզում եմ ընտրել նրան որպես իմ ամուսին և պատրաստ լինել, երբ նա գա: Ես ուզում եմ նախընտրել նրան: Ես հասկացա, որ կարող եմ գտնել նրան այն մարդկանց մեջ, ովքեր հեռու են նրանից, բոլոր անհավատների մեջ և որ ես կարող եմ սիրել նրանց մի շատ հատուկ կերպով՝ առանց ինքս ինձ համար որևէ բան ակնկալելու*»:
Երբ Քիարային հարցնում էին, թե ինչպես է Հիսուսի մասին խոսում ընկերների հետ, նա ասում էր. «*Ես չպետք է պատմեմ Հիսուսի մասին, այլ պետք է մարդկանց նվիրեմ Հիսուսին՝ իմ կյանքով*»: Մարիան միայն նոր էր հասկանում, թե ինչպես էր իր դուստրը կարողանում նվիրել Հիսուսին…

Մի քանի ամիս անց, Քիարան այլևս չէր կարողանում քայլել, հիվանդությունը քայքայել էր ոսկորները, Քիարան անկողնից չէր բարձրանում, բայց շարունակում էր պայքարել ցավերի դեմ ու, ավելի քան երբեք, անխախտ էր իր հավատքի մեջ, վստահ, որ դա էր Աստծո կամքը, ինչպես ինքն էր բացատրում: Մի օր նա ասաց. «*Եթե ես ստիպված լինեի ընտրություն կատարել քայլելու և Երկինք բարձրանալու միջև, ես կընտրեի Երկինք բարձրանալը*»:
Բայց, նույնիսկ անկողնին գամված, Քիարան ջանում էր չկտրվել իրադարձություններից, հեռախոսով ու նամակներով շփվում էր ընկերների հետ, հարցնում երիտասարդական հավաքներից, բացիկներ ուղարկում հավաքների ժամանակ կարդալու համար, ընդունում էր ընկերներին հիվանդանոցի իր սենյակում:
Բայց, հիվանդությունը ստիպում էր ավելի շատ աղոթքով անցկացնել օրերը: «*Այս պահին ես մտածում եմ միայն Աստծո կամքը լավագույնս կատարելու մասին.*-ասում էր Քիարան:-*Ես հիմա այլևս ոչինչ չունեմ, բայց դեռևս ունեմ սիրտ և դրանով միշտ կարող եմ սիրել*»: Քիարան վստահ էր, որ Աստված անչափ սիրում է իրեն և դա էր ուժ տալիս իրեն՝ դիմանալու և շարունակելու իր գոյությունը: 1990թ. հուլիսին Ֆոքոլարեի ղեկավար Տկն. Լյուբիքին ուղղված մի

նամակում Քիարան գրում է. «*Բժշկությունը հանձնվել է: Բուժումը դադարեցնելուց հետո մեջքիս ցավն ուժեղացել է և հազիվ եմ կարողանում շրջվել կողքի: Ես ինձ փոքր եմ զգում, իսկ առջևում ձգվող ճանապարհն այնքան դժվար է...հաճախ ես զգում եմ, որ հաղթվում եմ ցավից: Բայց Տեր Հիսուսը՝ իմ ամուսինը, գալիս է ինձ տեսնելու, այնպես չէ՞*»:
Մի օր Քիարան, անշարժ պառկած, նայում էր պատուհանից դուրս: Ծառի ճյուղերին թռչուններն ուրախ ոստոստում էին, աշխույժ ծլվլում, կտցարահում տերևները: Քիարան նրանց չէր նայում. հայացքը ճյուղերի արանքից երկնքի կապույտ անհունին էր հառել: Նրա մազերը թափվել էին, դեմքը դժգունել էր, աչքերի մոտ գոյացել էին մուգ շրջանակներ, բայց լույսն աչքերում առաջվանից ավելի պայծառ էր պսպղում:
«*Քիարա՛, ընկերներդ են եկել տեսակցության... Քիարա՛*,- շշնջաց մահճակալի կողքին նստած մայրը, բայց Քիարան, կարծես, չէր լսում մորը, ապա շրջվեց և ասաց, որ չի ուզում տեսնել նրանց: Մայրը ոչինչ չասաց, բայց երեկոյան Քիարան բացատրեց պատճառը. «*Դա չի նշանակում, որ ես նրանց չեմ կարևորում կամ որ տխուր եմ: Այլ որովհետև երբեմն շատ դժվար է իջնել այն տեղից, ուր իմ հոգին է բնակվում և ապա նորից եր բարձրանալ*»:
-Մայրիկ,-մի քանի օր անց ասաց Քիարան,-ես այլևս չեմ խնդրում Հիսուսին գալ և ինձ տանել: Չեմ ուզում նրա մոտ այն տպավորությունը ստեղծվի, որ ես չեմ ուզում այլևս տառապել: Ես համբերատար կսպասեմ մեր հարսանիքին:

Քիարան վստահ էր, իր մահը պետք է լիներ Հիսուսի հետ միություն, որ դա ոչ թե մահ էր, այլ՝ հարսանիք, Հիսուսն էլ փեսան էր, ճիշտ ինչպես Աստվածաշնչի «Երգ երգոցում»: Ֆոքոլարեի հավաքների ժամանակ պատանի աղջիկներին միշտ սովորեցնում էին, որ իրենք պետք է արժանի հարսներ լինեն Տեր Հիսուս Քրիստոսի համար: Կյանքի վերջին օրերին Քիարան իրոք պատրաստվում էր հարսանեկան արարողության, մորը բացատրում էր, թե ինչ զգեստ է ուզում հագնել, թե ինչ երգեր է ուզում, որ մարդիկ երգեն իր հարսանիքի ժամանակ և բոլորին հորդորում էր այդ օրն ուրախ լինել ու երգել:

-Ի՞նչ պիտի անեմ առանց քեզ»,-մի օր հարցրեց մայրը:
-Վստահի՛ր Աստծուն, մամ, և դու կանես այն ամենը, ինչ պետք է անես,-վստահ ասաց Քիարան,-երբ ինձ պատրաստես հարսանիքիս, անընդհատ պետք է կրկնես՝ հիմա Քիարա Լուչեն տեսնում է Հիսուսին:
1990թ. հոկտեմբերի 7-ին Քիարան մահացավ: Նա ընդհամենը 18 տարեկան էր:
«*Մայրի՛կ, երիտասարդներն են ապագան, դու տեսնում ես, ես այլևս չեմ կարող վազել, բայց որքան կուզենայի նրանց փոխանցել իմ ջահը, ինչպես օլիմպիական խաղերում: Երիտասարդները միայն մեկ կյանք ունեն և հարկ է, որ նրանք դա ճիշտ ապրեն...Ցտեսությու՛ն, երջանիկ եղիր, որովհետև ես երջանի՛կ եմ*»,-ասել էր նա մորը մահանալուց առաջ: Թաղման արարողությունը կամ հարսանիքը, ինչպես Քիարան էր ասում, կազմակերպվեց այնպես, ինչպես ցանկանում էր Քիարան: Շուրջ երկու հազար մարդ էր հավաքվել հրաժեշտ տալու Քիարային: Նրա աստվածասեր վարքի մասին լուրերը տարածվել էին ամենուրեք:
Մի քանի տարի անց՝ 1999-ին, Աքվիի եպիսկոպոսն, ով մի քանի անգամ այցելել էր Քիարային հիվանդության ժամանակ, ձեռնամուխ եղավ Քիարայի երանացման թեմական փուլի գործընթացին: Աքվիի եպիսկոպոսը Քիարայի կենսագիր Միշել Զանզուչչիին գրել էր հետևյալը.
«Ես մտածում եմ, որ նրա վկայությունը իմաստալից է, հատկապես երիտասարդների համար: Մենք այսօր ևս սրբության կարիք ունենք: Մենք պետք է օգնենք մեր երիտասարդներին գտնել մի ուղղություն, նպատակ, նրանց մենակության ու անպահովության զգացումը, մահը, ցավը, անհանգստությունը հաղթահարելու մի ճանապարհ: Հավատքի և ուժի այս վկայությունը մի երիտասարդ աղջկա կողմից այսօր բավական զարմանալի է: Նա օգնում է շատ մարդկանց փոխել իրենց կյանքը, և մենք գրեթե ամեն օր ականատես ենք լինում այս իրողությանը»:
2009թ. Հռոմի Սրբազան Քահանայապետ Բենեդիկտոս 16-րդը հայտարարեց, որ Քիարա Լուչեի երկնային միջնորդությամբ մի տղա է հրաշքով բուժվել, իսկ 2010թ. սեպտեմբերին Քիարա Լուչեն դասվեց երանելիների շարքը: Սկսված է նրա սրբացման գործընթացը: Երանացման արարողության ժամանակ արքեպիսկոպոս Անջելո Ամատոն ասաց հետևյալը.
«*Քիարա Բադանոն, ժամանակակից կենսուրախ մի աղջիկ, ով սիրում էր սպորտը, մեզ հաղորդում է լավատեսության և հույսի պատգամը՝ այն, որ նույնիսկ այսո՛ր երիտասարդները կարող են լինել սուրբ, այո, նույնիսկ այսօր*»:
Քիարայի մասին պատմությունն ուզում եմ ավարտել նրա բժշկի՝ Անտոնիո Դելոգուի խոսքերով. «*Իր ժպիտով ու լուսառատ աչքերով նա ցույց տվեց մեզ, որ մահը գոյություն չունի, այլ կա միայն կյանքը*»:
Տ. Հովսեփ քհն. Գալստյան
2019թ.

Ի՞նչ է հնազանդությունը՝ Աստծո կամքին. սպառնալիք մարդկային ազատությա՞նը

Երբ Եկեղեցին խոսում է Աստծո կամքին հնազանդվելու մասին, հասարակության մի լայն հատված, մանավանդ, այսպես կոչված «պրոգրեսսիվ» կամ «նորարար» երիտասարդությունը, վտանգ է տեսնում սեփական ազատության համար, որովհետև ուզում է ապրել այնպես, ինչպես իրեն հաճելի է կամ ինչպես ինքն է ճիշտ համարում: Այսպիսի մտածողության համար սեփական կարծիքը բացարձակ չափորոշիչ է՝ բառացիորեն ամեն ինչի արժեքը, ճշմարտացիությունը և օգտակարությունը որոշելու համար: Նրանց հեղինակավոր քննադատ կարծիքից չի կարող խուսափել ոչինչ՝ նույնիսկ Տեր Հիսուս Քրիստոսի և Իր Սուրբ Եկեղեցու, ընդհուպ Աստվածաշունչ մատյանի ճշմարտությունները: Սա անհատապաշտություն է, որ սակայն ներկայանում է սեփական կարծիքն ունենալու իրավունքի դիմակի տակ, որ առաջին հայացքից շատ բնական է թվում, բայց ազատության կեղծ ընկալման արդյունք է, չարի սովորական խարդավանք, որի պատմությունը գնում-հասնում է ընդհուպ մինչև աստվածաշնչյան Դրախտի պարտեզի մեղսագործության դրամային, որը թույլ է տալիս այն հասկանալ ամենաճշգրիտ լույսի ներքո: Ադամն ու իր կինը խաբվեցին նույն կերպ՝ իմանալ չարն ու բարին՝ նշանակում է՝ կարողանալ ամեն ինչ, լինել աստվածների նման և, ի վերջո, լինել չարու և բարու որոշողը, ապրել ըստ սեփական քմահաճույքի, լինել ազատ՝ այն թվացյալ ազատությամբ, որն առաջարկում է սատանան: Ինչու՞ է այդ ազատությունը ոչ իրական, պատրանքային: Եկե՛ք մտածենք այս հարցի պատասխանի մասին, որ շատ կարևոր է՝ հասկանալու համար Աստծո կամքին հնազանդվելու անհրաժեշտությունը:

Այն ազատությունը, որի հիմքը կամ առաջին ինստանցիան մարդու ես-ն է կամ մարդու սեփական պատկերացումը աշխարհի մասին, չի կարող լինել վերջնական կամ օբյեկտիվ ճշմարտություն, նույնիսկ եթե իր պես մտածում է հասարակության մի ստվար զանգված: Եվայի մեղքը կիսեց նաև Ադամը և դրանով Եվայի սխալը չարդարացվեց, նրա քայլը մնաց ծանր մեղք և տարածվեց ամբողջ մարդկության վրա: Ադամի և Եվայի մեղքը եղավ անհնազանդությունը՝ Աստծո կամքին՝ պատրանքային ազատություն ձեռք բերելու ակնկալիքով, մի ազատություն, որը ոչ թե լայնացրեց մարդու ազատությունը, այլ՝ ճիշտ հակառակը՝ դարձրեց գերի՝ սատանային, մեղքի հակմանը, մեղքի հետևանքով վնասված և մահականացու դարձած մարդկային բնության թուլություններին և մահվանը: Ուրեմն, այն ազատությունը որը սատանան խոստանում է մարդուն՝ մարդկային ես-ի հզորության դիմակի ներքո, իրականում գերություն է և զորության կորուստ, ավելին՝ մարդկային արժանապատվության կորուստ:

Ինչքան էլ պարադոքսալ թվա, բայց մարդկային *ազատությունը լիակատար կարող է լինել՝ միայն Աստծո կամքին հնազանդվելով*: Որովհետև միայն Աստծո կամքը կատարելո՛վ մարդը կարող է լինել ճշմարտապես ազատ՝ մեղքի գերությունից և սատանայի խաբեություններից: Քրիստոնեության մեջ լինել ազատ՝ նշանակում է՝ նախևառաջ ազատ լինել մեղքի՛ գերությունից, մարմնական կրքերի՛ կապանքներից: Ճշմարիտ ազատությունը, որը մարդուն բերում է երջանկություն, դա ազատ լինելն է այն ամենից, ինչը մարդուն դարձնում է նյութապաշտ, եսասեր, իշխանասեր, հպարտ, գոռոզ, հեշտասեր, հաճոյասեր: Եվ հակառակը՝ երբ մարդը գնում է այս մեղքերի ետևից, հենց այդ ժամանակ է աստիճանաբար կորցնում իր ազատությունը, որովհետև ձեռքերը սկսում են կապվել իր իսկ մարմնական կրքերով, մեղքի հակումներով, եսասիրության զգացումի խորացմամբ, հզորության պատրանքային զգացումով, որոնք իր թաքնված միջոցներով առավել խորացնում է սատանան: Ուրեմն, կարող ենք ասել, որ ճշմարիտ ազատությունը նշանակում է ազատագրություն՝ մեղքից, ադամական մեղքի հետևանքով վնասված մարդկային բնության կրքերից, թուլություններից, որոնք մարդուն ճահճի նման քաշում են դեպի կորուստ տանող լայն դուռը: Այլ ազատություն գոյություն չունի: Ցանկացած այլ ազատություն միայն խաբկանք է՝ մարդուն խոստացված սիրենների գեղեցիկ ձայներով, որոնց հետևելով՝ մարդը անխուսափելիորեն կենթարկվի բարոյական և հոգևոր նավաբեկության: Մեզ անհրաժեշտ է Ոդիսևսի խորագիտությունը և Քրիստոսի միամտությունը՝ խուսափելու համար սիրեններից և փրկելու մեր նավը:

Դարձյալ վերադառնանք վերոնշյալ առանցքային մտքին. միայն Աստծու կամքին հնազանդվելո՛վ կարող է մարդ լինել ճշմարտապես ազատ: Միակ ազատությունը, որն իրոք պատրանք չէ և կատարյալ է, դա Աստծո ազատությունն է, որովհետև միայն Ի՛նքն է կատարելապես ազատ՝ ամեն տեսակ սահմանափակումներից, քանի որ հավիտենական «Է» է, ամենագետ է, ամենակարող է, բացարձակ անթերի է, Նրա մեջ խավար բացարձակապես չկա, Նա Լույս է, Աստված սեր է, ըստ Աստվածաշնչյան ձևակերպումների: Եթե Աստված բացարձակ է և կատարյալ, հետևաբար, չկա մի բան կամ, մեկը, որ սահմանափակի նրա ազատությունը: Իսկ մարդը սահմանափակ է իր կարողություններով, քանի որ արարած է, ստեղծված է հողից, բայց իր թշվառությամբ հանդերձ՝ ստեղծված է իր Արարչի պատկերով և նմանությամբ, այսինքն՝ ստեղծված է հոգով, որն ունի սկիզբ, բայց չունի վախճան, այլ հավիտենական կյանքի համար է, ստեղծված է բանականությամբ և *ազատ կամքով*: Ազատությունը Աստծո կողմից մարդուն տրված ամենաթանկ նվերներից մեկն է, այն աստիճան թանկ, որ Աստված Ինքը *հարգում է մարդու ազատությունը* և թույլ է տալիս, որ մարդն ի՛նքն իր ազատ կամքով տնօրինի իր կյանքը, կայացնի իր որոշումները, ընտրի Աստծո կամքը կամ իր սեփականը, ընտրի հնազանդությունը կամ ապստամբությունը: Սատանան ընտրեց ապստամբությունը և վտարվեց Երկնքից, իսկ հնազանդությունը և՛ հրեշտակներին և՛ մարդուն պահում է Աստծո հետ մտերմության մեջ, հավիտենական երանության

և աստվածային ազատության մեջ: Երբ մարդ ապրում էր Դրախտի պարտեզում և հնազանդ էր Աստծո կամքին, մարդը նաև ուներ առավելագույն ազատություն, որ ընդհանրապես հնարավոր է մարդ արարածի համար. մարդն ազատ էր ապականությունից, հիվանդությունից, աշխատանքի դառը չարչարանքից, տառապանքի զանազան ձևերից և մահվանից, քանի որ ազատ էր մեղքից: Աստված կամենում է, որ մարդը հնազանդվի Իր կամքին՝ հանուն մարդու՛ ազատության, հանուն մարդու՛ երջանկության, ինչպես մի իմաստուն ծնող կամենում է, որ զավակն իրեն հնազանդվի, որովհետև ավելի լավ է հասկանում, թե ինչն է զավակի համար օգտակար, ինչը՝ ոչ: Հայր Աստված առավե՛լ ևս ավելի լավ գիտի, թե մեզ ինչ է պետք իրականում և տվել է հնարավոր լավագույնը ունենալու ճանապարհը, որն անվանում ենք «Աստծո Խոսք» կամ «Աստծո կամք», որն ընդունել՝ նշանակում է հնազանդվել Աստծուն: «Հնազանդություն» բառի իմաստը կարելի է արտահայտել նաև Աստծուն հավատալու, վստահելու, Աստծո խոսքի համաձայն ապրելու, Աստծուն հավատարիմ մնալու, Մկրտության ժամանակ քրիստոնյայի ստանձնած պարտականություններին հավատարիմ մնալու և, ի վերջո, Աստծո հետ մեր ուխտին հավատարիմ մնալու արտահայտություններով:

Ադամի և Եվայի անհնազանդությունից հետո Աստված մարդուն չլքեց մեղավոր վիճակում, այլ որոշեց մարդուն մեղքի գերությունից փրկելու համար նորից Իր կամքին հնազանդվելու համար ուխտեր կամ դաշինքներ կնքել մարդու հետ՝ խոստման միջոցով, որպեսզի մարդը սովորի ինքն իրեն պարտավոր զգալ Աստծո առաջ և պահել սեփական խոստումը, հարգել սեփական խոսքը, հարգել ինքն իրեն՝ տեսնելով, որ նախ Աստված է հարգում մարդուն և հավատարիմ է Իր աստվածային խոստմանը: Աստված ընտրեց խոնարհ ահնատներին, ովքեր հնազանդվեցին Իր կամքին և Իր ուխտերը կնքեց նրանց միջոցով: Այդպես Աստված ուխտ կնքեց Նոյի հետ, որ հնազանդվեց Աստծո խոսքին և կառուցեց տապանը, Աբրահամի հետ, որ հնազանդվեց Աստծու հրամանին և իր ընտանիքին վերցնելով՝ գնաց Աստծու կողմից իրեն խոստացված երկիրը: Աստված ուխտ կնքեց իսրայելացիների հետ՝ Մովսեսի միջոցով, որովհետև Մովսեսը հեզ էր և հնազանդվեց Աստծուն՝ Քորեբ լեռան վրա և հանձն առավ առաջնորդել Աստծո ժողովրդին: Աստված Մովսեսի միջոցով իսրայելացիներին տվեց իր պատվիրանները՝ որպես օրենք: Երբ Մովսեսը Սինայից իջավ և Աստծո օրենքը կարդաց ժողովրդի առջև, նրանք բացականչեցին. «*Այն ամենը, ինչ ասաց Աստված, կանենք և կհնազանդվենք*», Ելք, 24, 7: Որպես հնազանդության և ուխտի նշան՝ Աստծո պատվերով Մովսեսը կենդանիների արյուն շաղ տվեց ժողովրդի վրա և զոհասեղանի վրա: Մարդն ուխտին հավատարիմ մնալու համար տեսանելի նշանի կարիք ունի: Բայց ոչ արտաքին նշանները, ոչ էլ Աստծո սերն ու հոգատարությունը չօգնեցին. իսրայելացիները ուրացան իրենց Տիրոջը, դրժեցին իրենց ուխտը և ծանր մեղքերի մեջ ընկան, հնազանդվեցին չարին, պաշտեցին կուռքերին և օտար աստվածություններին, հալածեցին մարգարեներին, որոնք նրանց հորդորում էին սթափվել և հիշել հնազանդության ուխտը:

Աստվածաշնչի պատմությունները շատ պարզ բացատրում են, որ երբ մարդը չի հնազանդվում Աստծուն, չարիքի է հանդիպում: Մարգարեների միջոցով Աստված զգուշացնում էր, որ իսրայելացիները չհնազանդվելու պատճառով ենթարկվելու են թշնամիների հարձակումներին, գերի են տարվելու, կործանվելու է Սողոմոնի կառուցած տաճարը: Եվ այդպես էլ եղավ: Հովնան մարգարեն չհնազանդվեց Աստծու հրամանին՝ գնալու Նինվե և ապաշխարություն քարոզելու նինվեացիներին: Հովնանն ուզում էր փախչել Աստծո կամքից՝ նավով: Բայց միթե՞ դա հնարավոր է: Ծովում նավարկելիս՝ փոթորիկ բարձրացավ, նավաստիները բոլորը կխորտակվեին, եթե Հովնանը չզոջար և ինքն իրեն ծովը չնետեր, որպեսզի նավաստիների կյանքը փրկեր: Հովնանը ստիպված եղավ իր անհնազանդության համար վճարել իր ինքնազոհաբերությամբ: Բայց Աստված խնայեց նրա կյանքը, Հովնանը կետի փորից հնազանդության մի աղոթք բարձրացրեց առ Աստված և խոստացավ կատարել Նրա կամքը: Կետը նրան ափ հանեց, և Հովնանը քարոզեց նինվեացիներին ու պատճառ եղավ նրանց ապաշխարության: Ուրեմն, հնազանդությունն Աստծո կամքին մարդկային կյանքեր է փրկում և պատճառ դառնում Երկնքի արքայությունը ժառանգելու:

Սուրբ Կույս Մարիամը մի կատարյալ հնազանդության սրբապատկեր է մեզ համար: Այս դեռատի աղջկա «*եղիցի՛*»-ն, որն ասաց Գաբրիել հրեշտակապետին և, Աբրահամի նման՝ առանց հասկանալու, հանձն առավ կատարել Աստծո կամքը՝ որպես Տիրոջ աղախին, եղավ մարդկության փրկության արշալույսը, Փրկչի՝ աշխարհ գալու սկիզբը, մեղքը հաղթահարելու հեռանկարը: Մարիամը՝ որպես նոր կին, կատարեց Եվայի քայլի ճիշտ հակառակը, եթե Եվայի անհնազանդությամբ մահը մտավ աշխարհ, ապա Մարիամի հնազանդությամբ *կյանքի* դուռը վերստին բացվեց մարդու առաջ: Մարիամը կատարյալ հնազանդ կնոջ առաջին օրինակն է, որ եղավ Մայրը կատարյալ հնազանդ Որդու, Մայրը՝ իր Որդու բազում եղբայրների և քույրերի՝ Աստծուն հնազանդ Սուրբ Եկեղեցու:

Տ. Հովսեփ Գալստյան
30.03.2022



Տերը մտնում է յուրաքանչյուրիս նավակի մեջ, որպեսզի հնազանդվենք Աստծո կամքին և շատ պտուղ տանք

Մեծ Պահոց հինգերորդ հինգշաբթի օրվա ավետարանական պատմությունը՝ Ղկ. 5, 1-11, հնազանդության թեմայի մի որույն մեկնաբանություն է: Հիսուս գալով Գեննեսարեթի ծովափ՝ մտավ ձկնորս Սիմոնի նավակը՝ այդտեղից ժողովրդին քարոզելու համար: Քարոզից հետո Սիմոնին ասաց. «Քշի՛ր դեպի ծովի խորքերը և ձեր ուռկանները գցե՛ք որսալու համար»: Սիմոնը պատասխանեց. «Վարդապե՛տ, այս ամբողջ գիշեր չարչարվեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց քո խոսքի համար ուռկանները կգցենք»: Երբ լողացին դեպի ծովակի խորքը մեծ քանակությամբ ձուկ բռնեցին՝ այն աստիճան, որ այլ ձկնորսների էլ կանչեցին, որպեսզի կարողանան ձկներով լի ուռկանները հանել նավակ: Սիմոնն այս փաստից ցնցված՝ փաթաթվեց Հիսուսի ծնկներին և ասաց. «*Ինձնից հեռու գնա՛, Տե՛ր, որովհետև ես մեղավոր մարդ եմ*»: Հիսուս նրան ասաց. «*Մի՛ վախեցիր, այսուհետև դու մարդկանց պիտի որսաս՝ կյանքի համար*»:

Հիսուս մտավ Սիմոնի նավակը. սա նշանակում է Հիսուս մտավ Սիմոնի կյանքը, Սիմոնն ընդունեց նրան, թեև կարող էր մերժել: Հիսուս նրա կյանքը դարձրեց իր համար ավետարանացման միջոց: Հետո երբ Հիսուս Սիմոնին կոչեցի իր Եկեղեցու վեմ և կկոչի «Պետրոս», այս փաստն ավելի ակներև կդառնա: Հիսուս հանկարծ ուղղակի մի պատվեր է տալիս Սիմոնին՝ «Քշի՛ր դեպի ծովի խորքերը»: Սիմոնը սկզբից վարանում է՝ հիմնվելով իր մարդկային փորձառության վրա, չէ՞ որ ամբողջ գիշեր չարչարվել են և ձուկ չեն բռնել, անիմաստ է նորից գնալը: Բայց ինչ-որ բան Հիսուսի մեջ Սիմոնին հուշեց հնազանդվել Նրա խնդրանքին և մի կողմ դնել սեփական փորձառությունը: Սիմոնը՝ Հիսուսին վստահելով իր նավակը քշեց դեպի խորքերը, որտեղ ոչ մի հույս չկար, որ ձուկ կբռներ, օրվա ժամն էլ նպաստավոր չէր: Ոչինչ Սիմոնին չէր հուշում, որ ինքը հաջողելու է, բացի Հիսուսի վստահ խոսքերից: Եվ Սիմոնը գնաց: Սիմոնն ինքն իրեն դրսևորեց որպես Աբրահամի ճշմարիտ սերունդ՝ հավատքի սերունդ, որ հնազանդվում է Տիրոջ կամքին: Եվ Սիմոնի հնազանդությունը առատորեն վարձատրվեց, իր համար բոլորովին անսպասելի առատությամբ, որ կատարյալ մի հրաշք էր՝ մի բան, որ ոչ մի կերպ չէր տեղավորվում իր մարդկային տրամաբանության մեջ: Նա ճաշակեց Աստծուն հնազանդվելու պտուղը և զգաց ոչ միայն Հիսուսի անձի մեջ ներկա աստվածային վիթխարի զորությունը, այլև՝ իր փոքրությունը. «*Ինձնից հեռու գնա՛, Տե՛ր, որովհետև ես մեղավոր մարդ եմ*»: Սիմոնը զգաց, որ ի սկզբանե թերահավատությամբ էր վերաբերվել Հիսուսի խոսքերին և ամաչեց դրա համար: Գուցե, այստեղ կարելի է տեսնել և ամբողջ մի անհնազանդ ժողովրդի ամոթը՝ Աստծո առաջ: Բայց Հիսուս, որ Ի՛նքն էր եկել Սիմոնի նավակը, ոչ միայն հեռու չվանեց Սիմոնին՝ գիտենալով նրա մարդկային տկարությունը, այլև՝ նրա հնազանդության համար է՛լ ավելի մոտեցրեց Սիմոնին Իրեն: Հիսուս ոչ միայն Սիմոնի նավակում մնաց, այլև՝ Սիմոնին տարավ Ի՛ր նավակի մեջ, որ Իր Եկեղեցին է՝ նրան կարգելով այդ նավակի երկրային նավապետ՝ ասելով. «*Դու վեմ ես, և քո վրա պիտի շինեմ իմ եկեղեցին*», Մտթ. 16, 18: Սիմոնը դարձավ առաջամարտիկը մի նոր ձկնորսության՝ որսալու մարդկանց՝ կյանքի համար, ինչպես ասաց Տերը: Սիմոնի հնազանդությունն իրեն ոչ միայն առատ ձուկ բերեց, այլև եղավ սկիզբը՝ իր նոր աստվածահաճո առաքելության, իր մասնակցության՝ Տիրոջ փրկագործության մեջ:

Հիսուս իր աշակերտներին սովորեցնում էր հնազանդվել Աստծո կամքին՝ նոր առաքելություն սկսելով Իր հետ միասին, այսինքն՝ մասնակցելով իր որդիական հնազանդության առաքելությանը. «*Եվ նավակը ցամաք հանելով՝ թողեցին ամեն ինչ ու նրան հետևեցին*», Ղկ. 5, 11: Այսպես են ավետարանները ներկայացնում բոլոր աշակերտների կանչը: Հիսուս պարզապես ասում էր. «*Արի՛ իմ ետևից*», և թողնելով ամեն ինչ՝ նրանք գնում էին Նրա ետևից: Հավանաբար, Հիսուսի անձն ինքնին տրամադրում էր մի այնպիսի հնազանդության և վստահության, որ ապագա աշակերտները պատրաստ էին թողնելու և՛ իրենց ընտանիքները, ինչպես Հակոբոսն ու Հովհաննեսը թողեցին իրենց հորը՝ Զեբեդեոսին, և՛ իրենց աշխատանքը, և՛ իրենց եկամուտներն ու մեղավոր կյանքը, ինչպես արեց Ղևին, որ դարձավ Մատթեոս, և՛ իրենց կարծրացած պատկերացումները, ինչպես Նաթանայելը, որ մտածում էր, թե Գալիլիայից չի կարող որևէ լավ բան դուրս գալ, կամ սամարացին այն կինը, որին Հիսուս հանդիպեց Հակոբի ջրհորի մոտ և որը լսելով կենդանի ջրի մասին Հիսուսի խոստումը՝ թողեց իր սափորը և դարձավ մի առաքյալ՝ սամարացիների համար: Հիսուս գալիս է յուրաքանչյուրիս նավակը, ում մեջ տեսնում է ցանկություն՝ գտնելու Աստծուն, կամք՝ ճանաչելու Արարչին, պարարտ հող՝ հնազանդվելու Տիրոջը և տալիս է հնազանդության շնորհը՝ որպես պարգև, հավատքի, հույսի և սիրո շնորհները՝ որպեսզի մարդն աճի Աստծո կամքին հնազանդության մեջ և կատարի այն ի սպառ, ինչպես Ինքը:

Եկե՛ք պատրաստ պահենք մեր նավակները, որպեսզի Տերը մտնի մեր նավակը և այն դարձնի իր ավետարանացման ամբիոն, Իր սիրո խոսափող և գործադրող, որպեսզի մենք էլ մասնակից դառնանք Իր հնազանդությանը Աստծո կամքին և իրավունք ունենանք «Հայր մեր»-ն աղոթելիս՝ ասել. «*Եղիցի՛ն կամք քո որպես յերկինս եւ յերկրի*»: Եկե՛ք վստահենք Տիրոջ խոսքին, որ մեզ էլ Սիմոնի նման պատվիրում է վստահ քշել դեպի ծովի խորքերը, որտեղ հույս չկա միայն թերահավատի համար, բայց, ինչպես Ինքն է ասում, «ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է» (Մրկ. 9, 23), և կտեսնենք, որ շատ պտուղ ենք տալու. «*Ես ձեզ ընտրեցի … որ դուք գնաք և պտղաբեր լինեք*», Հվի. 15, 16:

Տ. Հովսեփ

31.03.2022

Խորհրդավոր ընթրիք և Գեթսեմանի.
Հիսուս՝ Աստծո կատարյալ հնազանդ Որդին

Հիսուսի ամբողջ կյանքը հնազանդության մի մարմնացում էր: Դեռևս մանուկ հասակում նա սովորեց հնազանդվել իր երկրային ծնողներին՝ Մարիամին և Հովսեփին (Ղկ. 2, 51), Աստծո օրենքին, որի առաջին ամենավառ օրինակը տասներկու տարեկանում Աստծո տաճարում Հիսուսի մնալն էր: Երկրորդ՝ երեսուն տարեկանում Հիսուս իր առաքելությունը սկսեց մկրտությամբ՝ Հովհաննեսի ձեռքով՝ նրա զարմանքին պատասխանելով. «*Որպեսզի այսպես կատարվի Աստծո ամեն արդարություն*»: Տերը մկրտության կարիք չուներ, բայց Հովհաննեսի ձեռքով մկրտվելը Աստծո կամքի առջև լիակատար հնազանդության մի օրինակ էր. Հիսուս՝ անմեղ և կատարյալ Մարդու Որդին, գալիս է կատարելու Հոր կամքը՝ իր մարդկային բնության մեջ կատարելու լիակատար ապաշխարություն՝ մարդկության անհնազանդության փոխարեն առաջարկելով իր կատարյալ հնազանդությունը, կամ իր միջոցով ամբողջ մարդկությունը ընկղմելով ջրի մեջ՝ սպանելու համար հին՝ մեղավոր մարդուն, որպեսզի Սուրբ Հոգու զորությամբ վերածնվի նոր մարդը: *Աստծո արդարությունը մարդու լիակատար հնազանդությունն է՝ Աստվածային կամքին.* Հիսուս իր մկրտությամբ սա՛ էր ուզում բացատրել: Բայց սա միայն նախապատկեր էր՝ ճշմարիտ մկրտության, որի մասին Տերն ասաց իր Հովհաննեսին և Հակոբոսին, ովքեր ուզում էին պաշտոններ զբաղեցնել Աստծո արքայության մեջ. «*Կարո՞ղ եք մկրտվել այն մկրտությամբ, որով ես եմ մկրտվելու կամ խմել այն բաժակը, որը ես եմ խմելու*», Մտթ. 20, 22: Հիսուսի հնազանդությունը, որը սկսվեց ջրով մկրտությամբ, իր լրումին հասավ իր չարչարանքների բաժակը խմելով և Խաչի մահով մկրտվելով, որտեղ մահվան մեջ սուզեց մեղավոր մարդուն և հարություն առավ՝ որպես անապական մարդ՝ մարդկության առջև բացելով նույն լուսավոր հեռանկարը:

Հիսուս իր ուսուցումների ժամանակ հստակ բացատրում է իր առաքելության իմաստը, որ կայանում է Հոր կամքը կատարելու մեջ և օգնելու մեղքի մեջ անկյալ մարդուն՝ Իր հետ միասին կատարել Աստծո կամքը, որ նշանակում է հնազանդվել Աստծուն: **Քանի որ մեղքի և մահվան պատճառը մարդու անհնազանդությունն էր Աստծո կամքին, ապա մեղքը և մահը հաղթահարելու միակ ճանապարհը Աստծուն կամքին հնազանդվելն է և կատարելը:** Այս բանաձևը շատ պարզ է, և Հիսուս ջանաց իր պարզ կյանքով և ուսուցմամբ հնարավորինս հստակորեն բացատրել հենց այս ճշմարտությունը: «*Ոչ ամեն ոք, ով ինձ Տե՛ր, Տե՛ր է կոչում, կմտնի Երկնքի արքայություն, այլ՝ նրանք, ովքեր կատարում են կամքը իմ Հոր, որ երկնքում է*», Մտթ. 7, 21: Մեկ այլ տեղ էլ, երբ խոսում է հոգևոր հարազատության մասին, ասում է. «*Ով կատարում է կամքը իմ Հոր, նա է ինձ եղբայր և քույր և մայր*», Մրկ. 3, 35: Սա Եկեղեցու՝ որպես Քրիստոսի ընտանիքի գոյության հիմքն է, որովհետև միայն Աստծո կամքը կատարելո՛վ կարելի է միասին հասնել փրկության: Աստծո կամքը կատարել՝ նշանակում է նաև մշտապես *լինել* եկեղեցում, որովհետև Աստծո կամքը խտանում է Աստծուն ամբողջ էությամբ սիրելու և մերձավորին սեփական անձի պես սիրելու պատվիրանների մեջ, այլ խոսքով՝ առ Աստված և դեպի մերձավորը ի սպառ սիրո մեջ, որ Հիսուսի ողջ էությունն է և կյանքը: Ուրեմն Աստծուն հնազանդվել կամ կատարել Նրա կամքը լիովին՝ հնարավոր է միայն Եկեղեցում՝ եղբայրների և քույրերի հոգևոր համայնքի մեջ: Աստծո կամքը կատարելը նաև մարդկային կյանքի ամենաէական կերակուրն է: Երբ Հիսուս Հակոբի ջրհորի մոտ էր, աշակերտները վերադարձան քաղաքից և առաջարկեցին Տիրոջը հաց ուտել, իսկ Նա ասաց. «*Ես ունեմ կերակուր, որը դուք չգիտեք … Այս է իմ կերակուրը, որ կատարեմ կամքը նրա, ով ինձ ուղարկել է*», Հվի. 4, 34: Հիսուսի համար այլ կերակուր պետք չէ, այլ՝ միայն այն, որ կատարի իր Հոր կամքը, որովհետև այդպես ոչ միայն Իր կյանքը պահեց, այլև՝ բոլոր նրանց, ում համար իջել էր Հոր մոտից. «*Ես եկա, որպեսզի կյանք ունենան, և առատորեն ունենան*», Հվի. 10, 10: Հիսուս եկավ՝ ամբողջովին՝ մինչև վերջին տառը, կատարելու Աստծո կամքը և լրացնելու այն՝ ամբողջ մարդկության փոխարեն. «*Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա, չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու: Ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչև երկինքն ու երկիրն անցնեն, Օրենքից և մարգարեներից մի հովտ (եբրայերենի տառերից մեկը) իսկ, որ մի գրանշան է, չի անցնի՝ մինչև որ ամեն ինչ չիրականանա*», Մտթ. 5, 17-18:



Խորհրդավոր ընթրիքը

Մեր խորհրդածությունների մեջ աստիճանաբար մոտենում ենք Հիսուսի հնազանդության ամենադրամատիկ պահերին, որ Վերջին ընթրիքն է և Գեթսեմանիի պարտեզի աղոթքը՝ Իր չարչարանքներից ժամեր առաջ: Վերջին ընթրիքի ժամանակ Հիսուս հաստատելով Սուրբ Հաղորդության խորհուրդը՝ Աստծո և մարդու միջև հնազանդության և հավատարմության նոր ուխտ կնքեց՝ Իր Արյամբ, որը ժամեր անց հեղվելու էր նաև Խաչի վրա և լրացնելու, իմաստավորելու էր սեղանի շուրջ Հիսուսի կատարածը: Հիսուս վերցրեց բաժակը, գոհություն հայտնեց Հորը, օրհնեց, տվեց աշակերտներին և ասաց. «*Խմե՛ք սրանից բոլորդ, այս է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի մեղքերի թողության և քավության համար*», Մտթ. 26, 28: Ուրեմն, նոր ուխտը կնքվեց Քրիստոսի չարչարանքներով, Աստծո Որդու արյամբ և ոչ թե կենդանիների արյամբ, ինչպես նախկինում: «*Քրիստոսի արյունը հենց Իր ամբողջական ընծայաբերումն է, որի մեջ Նա ընդունում է չարչարանքներ՝ մարդկության ամբողջ չարիքի պատճառով, և մարդկության ամբողջ անհավատարմությունը ծածկվում է իր ամպայմանական հավատարմությամբ: Վերջին ընթրիքի ժամանակ մարդկությունը ներառվում է Հիսուսի կողմից մարդկության փոխարեն կատարած հնազանդության մեջ*»,-բացատրում է Յոզեֆ Ռացինգերը (Բենեդիկտոս 16-րդ Քահանայապետը)՝ իր «Հիսուս Նազովրեցի» գրքում, մաս 2-րդ, «Վերջին ընթրիքը»: Սա նշանակում է, որ հավատացյալները, մասնակցելով Սուրբ Պատարագին և ճաշակելով Քրիստոսի Մարմինն ու Արյունը, աշակերտների նման *ներառվում են Քրիստոսի հնազանդության ուխտի մեջ և արդարանում* Քրիստոսի հեղած արյան գնով, Նրա զոհաբերության վաստակով և Աստծո համար միակ ընդունելի միջնորդությամբ: Բայց Քրիստոսի ուխտի մեջ մարդու մասնակցությունը սկսվում է Մկրտության խորհրդի միջոցով, երբ մարդ խոստանում է հրաժարվել սատանայից և հանձն է առնում կատարել Աստծո կամքը, լիարժեք կերպով հնազանդվել Աստծուն:

Հիսուսի աղոթքը՝ Գեթսեմանիի պարտեզում



Հիսուսի հնազանդության հաջորդ մեծ պատկերը Գեթսեմանիի պարտեզում Հիսուսի հուզիչ աղոթքն է՝ առ Հայրը: Վերջին ընթրիքից հետո, Հիսուս իր աշակերտների հետ գնաց Ձիթենյաց լեռան վրա գտնվող մի այգի, որ կոչվում էր Գեթսեմանի, դարձյալ՝ ձեթի իմաստով, քանի որ այդ վայրում մի ձիթհանք կար: Այդ այգում տեղի ունեցածը Հիսուսի երկրային կյանքի հոգևոր պայքարի, ի սպառ հնազանդության գագաթնակետն է. այստեղ տեղի ունեցավ ոչ միայն Տիրոջ աղոթքը, որն աստվածային կամքն ընդունելու և մարդու լիարժեք հնազանդության մի հարուստ սրբապատկեր է, այլև այստեղ տեղի ունեցավ Հիսուսի մատնության դրվագը, ձերբակալությունը, այստեղ դրվեց նոր փորված գերեզմանի մեջ՝ քարայրում, այստեղ էլ տեղի ունեցավ Նրա Հարությունը: Բենեդիկտոս 16-րդն իր վերոնշյալ գրքում զուգահեռներ է տանում Դրախտի պարտեզի և Գեթսեմանիի միջև՝ հիմնվելով Հովհաննեսի ավետարանի նկարագրության վրա: Դրախտի այգում տեղի ունեցավ մարդու անհնազանդությունը և անկումը, իսկ Գեթսեմանիում՝ մարդու լիակատար հնազանդությունը և վերածնունդը՝ Հիսուսի հնազանդության միջոցով:

Հիսուս իր աշակերտներից երեքին՝ Պետրոսին, Հովհաննեսին և Հակոբոսին, իր հետ վերցնելով՝ գնաց առանձին աղոթելու, նրանց պատվիրեց նստել, մինչև ինքն աղոթի, և ասաց. «*Հոգիս փխուր է մահու չափ, այստեղ մնացե՛ք և ինձ հետ արթուն հսկե՛ք*», Մտթ. 26, 38: Իսկ ինքն առանձնացավ, երեսն ի վայր ընկավ ու սկսեց աղոթել: Ղուկաս ավետարանիչը գրում է, որ նա տագնապի մեջ էր, ամբողջ հոգով էր աղոթում, և «*նրա քրտինքը հոսում էր արյան կաթիլների նման՝ շիթ-շիթ գետնին թափվելով*», Ղկ. 22, 44: Հիսուսին երկնքից մի հրեշտակ երևաց և ուժ էր տալիս: Այս

նկարագրությունը մեզ հրավիրում է գոնե աղոտ պատկերացում կազմել այն մասին, որ Տիրոջ համար ծանր էին աղոթքի այդ րոպեները, «հոգիս տխուր է մահու չափ», բացատրում է Տերն անկեղծորեն: Ավետարաններում ընդհանրապես չենք տեսնում Հիսուսին՝ իր ներքին խռովքի մասին խոսելիս, ավետարանիչներն են գրում այդ մասին. Ղազարոսի մեռնելու մասին լուրն առնելիս՝ Հիսուս խռովվեց, լաց եղավ: Այս խռովքի կամ տրտմության արտահայտությունը կրկնվում է նաև Գեթսեմանիի աղոթքի դրվագում, բայց այստեղ Հիսուս Ի՛նքն է ասում այդ մասին: Տերն ուզում էր, հավանաբար, որ աշակերտները կիսեին իր անասելի խռովքը, մասնակցեին իր տառապանքի ժամին՝ աղոթքով, հսկմամբ: Բայց առաքյալները չդիմացան և քնով անցան, գուցե այն պատճառով, որ չէին պատկերացնում այն աննկարագրելի ցավը, որ զգում էր Տերը և այն ամենը, ինչ լինելու էր ժամեր անց: Աշակերտների այս քունը հիշեցնում է մարդկության հոգևոր անընկալունակությունը, թմրությունը, անտարբերությունը, նույնիսկ՝ «բարեպաշտ» քրիստոնյաների:

Հիսուս սկսեց աղոթել՝ երեսով գետնին ընկած, որ նշան է լիակատար ձևով աստվածային կամքին հանձնվելու և այն կատարելու: Բայց ինչու՞ ենք հիմա տեսնում Հիսուսին՝ այսպես խռովված, տրտմած և մահու չափ տխուր, և ինչու՞ է Նա ուզում, որ աշակերտներն արթուն մնան և հսկեն, ինչու՞ է Տերը խոսում իր տառապանքի մասին, չէ՞ որ բազում անգամներ հրաների անարդարության պատճառով Հիսուս տառապում էր: Բանն այն է, որ մոտենում էր Իր զոհաբերման ժամը, Հիսուս առերեսվում էր մեղքի ամբողջ այլանդակ իրականությանը, չարի անիրավությանը և հակառակությանը՝ Արարչին, մարդկային անարդարության ամբողջ ստորությանը, որ պատճառ է դառնում մարդկային անմեղ կյանքերի խորտակման, սրբապղծության, մարդկային արժանապատվության կորստյան: Այս ամենը Նրա համար առավել սարսափելի է և անարդար, քանի որ Ինքը *ինքնին Կյանքի Աղբյուրն է,* «Կյանքը նրանով էր», Հվի. 1, 2, *ինքնին Սրբությունն է, ինքնին անմատչելի Լույսն է,* քանի որ Նա Աստծո Որդին է և Մարդու Որդին, որ բացարձակապես անմեղ է: «*Հենց այն պատճառով, որ Նա Որդի է, առավելագույն հստակությամբ է տեսնում կեղտի և մահվան ամբողջ անդունդը, հպարտության և սրի ամբողջ զորությունը, չարի ամբողջ հնարամտությունն ու զզվելիությունը, որ քողարկվում է կյանքի դիմակի տակ և անդադար քայքայում ու քանդում է կյանքը*», գրում է Բենեդիկտոս 16-րդը (նույն տեղում, Գլուխ 6, «Գեթսեմանի»): Այս սարսափելի անդնդի դիմաց Հիսուս սարսափում է, նա ցնցված է՝ այն աստիճան, որ քրտինքը հոսում է արյան կաթիլների նման: Սա ոչ միայն մարդկային վախ է, տագնապ, այլև՝ խոր ցավ և տրտմություն՝ մարդու ամբողջ թշվառությանն ի տես, չարի կործանարար գործերի ամբողջ պատմության դեմ հանդիման: Այդ է պատճառը, որ Տերը որդիական սիրով և աղաչանքով դիմում է Հորը և ասում. «***Աբբա՛***», այսինքն՝ հայրիկ, ինչպես մի մանուկ կդիմի իր հորը՝ ընտանիքում, որովհետև եբրայերենում այդ բառն օգտագործում էին ընտանիքում և ոչ երբեք աղոթքի ժամանակ: Բայց Հիսուս հենց այս բառով է խոսում՝ որպես ճշմարիտ Աստծո Որդի, որ երբեք զանց չի առնի կատարել հայրիկի կամքը: Հիսուս աղոթում է այսպես. «*Աբբա՛, Հա՛յր, քեզ համար ամեն ինչ հնարավոր է. այս բաժակը հեռացրու՛ ինձնից, բայց ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես դու ես կամենում*», Մրկ. 14, 36:

Հիսուս աղաչում է Հորը, որ մեղքի, ատելության, անարդարության անտանելի բեռն իրենից հեռու անցնի: Այդ բեռը բաժակի նման է, որ չարն իրեն առաջարկում է խմել անարդարացիորեն: Այդ բաժակը զզվելի է Հիսուսի համար, բայց Ինքը եկել էր խմելու այն մինչև վերջ՝ ցմրուր, Ինքը եկել էր քավության նոխազի, մեղքերի քավության գառան նման իր վրա վերցնելու աշխարհի մեղքը («*Ահա՛ Գառն Աստծո, որ բառնում է աշխարհի մեղքը*», Հվի. 1, 29), Ինքը եկել էր սպունգի նման Իր մեջ ներծծելու, ընդունելու աշխարհի մեղքը և մեղքի հետևանքները՝ տառապանքը, ընդհուպ մինչև մահը: Այս բաժակն ըմպելու պատկերն իր լրումին է հասնում խաչի վրա պատահած այն դրվագում, երբ Հիսուս ասում է. «Ծարավ եմ», և զինվորները նրա սուրբ շուրթերին են մոտեցնում քացախի մեջ թաթախված սպունգը, և Տերը, ճաշակելով այդ դառնությունն, բացականչում է. «*Ահա՛ ամեն ինչ կատարվեց*»: Հիսուս ամենայն հստակությամբ տեսնում էր այդ բաժակի ամբողջ դառնությունը, բայց գիտեր, որ խմելու էր այն, որպեսզի այդպիսով վճարեր մարդկության բոլոր բարոյական պարտքերի դիմաց, իր կյանքով կատարեր հատուցումը մեղքերի դիմաց և փաստեր ի հեճուկս սատանայի և ի լուր աշխարհի, թե որքա՜ն է սիրում Հորը և մարդ արարածին՝ որպես Աստծո կատարյալ Որդի՝ երկու իմաստով՝ Աստծո Որդի և Մարդու Որդի:

Որպես Մարդու Որդի, Հիսուս ապրում էր մարդկային տագնապ, խռովք և իր սուրբ Անձի մեջ զգում էր այն ամբողջ հակառակությունը՝ Աստծո կամքի դեմ, որ ադամական մեղսագործությունից հետո դարձել էր մարդկային էության և պատմության անբաժանելի մասը: Սա էր, որ սարսափեցնում էր Նրան և ստիպում խնդրել, որ այդ բաժակն իրենից հեռու անցնի: Ավետարանական դրվագը փաստում է, որ Հիսուս Ինքն իր մեջ պայքարում էր մարդկային հակառակության դեմ, որ սատանայի սերմանած որոմն էր: Հիսուս պայքարում էր, որպեսզի «*մարդկային բնական կամքը հակառակության վիճակից վերստին վերադարձներ աստվածային կամքի հետ համաձայնությանը և այդպիսով վերականգներ մարդու մեծությունը և արժանապատվությունը*» (Յ. Ռացինգեր, «Հիսուս նազովրեցի», Գլ. 6): Հիսուս իր մարդկային բնական կամքի մեջ է վերցրել մարդկության ամբողջ անհնազանդությունը, ինքնագլխությունը, հակաճառությունը Արարչին, որը Հիսուս, պայքարելով աստվածային զորության շնորհիվ, որ ունի որպես Աստծո Որդի, կարողացավ հաղթահարել ամբողջությամբ և մարդկային կամքն Իր սուրբ Անձի մեջ դնել լիակատար համաձայնության կամ համակամության մեջ՝ Արարչի կամքի հետ, այսինքն՝ մարդկային բնական կամքը վերադարձրեց իր նախնական՝ մինչև ադամական մեղքը Դրախտի պարտեզում ունեցած շնորհալի վիճակի մեջ: Աստվածաբան Քրիստոֆ Շյոնբորնը

գրում է. «*Մարդկային և աստվածային կամքերի հակառակությունից դեպի միություն անցումն իրականացվում է Խաչի հնազանդությամբ: Այդ անցումը կատարվում է Գեթսեմանիի հոգևոր պայքարի մեջ*» (Ք. Շյոնբորն, «Christus-Ikone», S. 131, Յ. Ռացինգեր, «Հիսուս Նազովրեցի, նույն տեղում): Մարդու հակառակության լիակատար հաղթահարումը և անցումը դեպի լիակատար հնազանդություն՝ տեղի է ունենում հետևյալ խոսքերով. «***Բայց թող լինի ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես դուս ես կամենում***»: Հիսուս իր մարդկային կամքը ոչ թե ոչնչացնում կամ տարրալուծում է կամ հրաժարվում է դրանից, այլ այն ամբողջությամբ դնում է Աստծո տրամադրության տակ, ինչպես սաղմոսներում աղոթում ենք. «Սովորեցրու՛ ինձ կատարել քո կամքը», կամ՝ «Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի ճանապարհին»: Հիսուս մարդկային կամքը որպես մի ընծայաբերում, պատարագ, դնում է Արարչի տրամադրության տակ, ավելին՝ նվիրում է Արարչին, որպեսզի Արարիչը մաքրագործի այն, վերադարձնի դրա նախնական որակը՝ որպես աստվածային կամքի արտահայտիչ, կրող և արտացոլող, որպես ճշմարիտ սիրող որդու կամք, որ միշտ հնազանդվում է իր հորը: Հիսուս իր մարդկային բնական Ես-ը և դրա մեջ միաժամանակ ամբողջ մարդկության Ես-ը անվերապահորեն նվիրում է Հորը՝ այդպիսով մարդկությանն էլ ներառելով իր որդիական հնազանդության մեջ, այնպես որ Հիսուսի այս աղոթքով և Նրան հավատալով՝ ամբողջ մարդկությունը՝ բոլորս, ընդգրկված ենք Իր Որդիական հնազանդության և սիրո մեջ: Հիսուս Աստծո առաջ է բերում մարդկային գոյության ամբողջ թշվառությունն ու խեղճությունը և իր հնազանդությամբ մարդուն հաշտեցնում Աստծո հետ: Այս է բացատրությունը, թե ինչու մարդը մկրտվելով և Քրիստոսին հավատալով՝ վերականգնվում է իր աստվածատուր մարդկային արժանապատվության մեջ՝ որպես Աստծո Որդի, որպես Աստծո ընտանիքի անդամ՝ իր անդրանիկ եղբոր՝ Հիսուսի հնազանդության շնորհիվ:

Պետք է հատկապես ընդգծել, որ Հիսուս այս հնազանդությանը հասավ և հաղթեց իր պայքարում՝ հենց չարչարանքի միջոցով, ինչպես նկատում է Շյոնբորնը: Իսկ Ռացինգերը հիշեցնում է Եբրայեցիներին ուղղված թղթի տողերը. «*Թեպետև Որդի էր, իր չարչարանքների միջոցով հնազանդություն սովորեց, և, կատարյալ դառնալով, բոլոր իրեն հնազանդվողներին հավիտենական փրկության պատճառ դարձավ*», Եբր. 5, 8:

Նրա չարչարանքը մի մաքուր ընծա է, որ նվիրեց Հորը՝ որպես իր որդիական հնազանդության կատարյալ արտահայտություն: Հիսուս Իր չարչարանքով, որ կրեց բացարձակապես անարդար կերպով, քանի որ ոչ մի մեղք չուներ, ամբողջությամբ կատարեց աստվածային արդարությունը, այսինքն՝ հատուցեց յուրաքանչյուր մարդ արարածի մեղքերի դիմաց լիովին, ինչպես Ինքն է ասում Հովհաննես Մկրտչին, որ չի կարող հասկանալ, թե ինչու պետք է Հիսուս, որ անարատ է, մկրտվի. «*Թո՛ւյլ տուր հիմա, որպեսզի այդպես կատարվի Աստծո ամեն արդարություն*»: Հիսուս կամովին, առանց հատուցման անհրաժեշտության, ընկղմվեց մահը խորհրդանշող ջրի մեջ, որպես՝ մարգարեություն իր գալիք տառապանքների և մահվան, որպեսզի իր մահով մարդկությանը լվա մեղքի կեղտից, որպեսզի ջրից կամ իր մահվան տառապանքից դուրս բերի նոր՝ հարուցյալ մարդկություն՝ ներառված և ներկայացված իր մարդկային մարմնի մեջ: Շեշտենք, որ Հիսուս այս մահը հանձն առավ ամբողջովին կամավոր սկզբունքով՝ «*Ի սպառ սիրեց նրանց*», Հվհ. 13, 1: Այս սերն է Աստծո արդարության պսակը: Այսինքն՝ Աստված պահանջում է արդարացի հատուցում, որը միաժամանակ կարող է կատարվել ճշմարիտ կերպով՝ միայն լիակատար *սիրո հնազանդության* շնորհիվ, որ մենք տեսնում ենք Հիսուս Քրիստոսի մեջ: Կամավոր չարչարանքով փաստված հնազանդությունն ընդունելի է Հոր համար. «*լսելի եղավ իր բարեպաշտության համար*», Եբր. 5, 7: Գեթսեմանիի աղոթքի ժամանակ Տիրոջ հրեշտակը ուժ էր տալիս նրան: Այսպես Աստված ուժ է տալիս յուրաքանչյուրին, ով հանձն է առնում խմել սեփական տառապանքի բաժակը՝ նմանվելով Քրիստոսին կամ նրա տառապանքին մասնակցելու դիտավորությամբ: «*Լսելի եղավ*» արտահայտությունը վերաբերում է յուրաքանչյուր մարդու, ով հավատում է Հիսուսին և ուզում է օգտվել Նրա հնազանդության և չարչարանքի անսպառ վաստակից, քանի որ Հիսուս ամբողջ մարդկության փոխարեն հայտնեց իր լիակատար հնազանդությունը՝ Աստծո կամքին:

Այս խորհրդածությունն ավարտենք Սբ. Պողոսի՝ փիլիպպեցիներին գրված հուզիչ և զորավոր տողերով, որ, ըստ երևույթին, մի հին քրիստոնեական օրհներգ է. «*Ձեզանից յուրաքանչյուրը թող խորհի այն, ինչ որ կա Հիսուս Քրիստոսի մեջ, որ լինելով Աստծո կերպարանքով, Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ ինքն իրեն ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման դառնալով … Ինքն իրեն խոնարհեցրեց՝ հնազանդ լինելով մինչև մահ և այն էլ՝ խաչի մահ: Դրա համար էլ Աստված նրան առավել բարձրացրեց և նրան շնորհեց անուն, որ վեր է բոլոր անուններից, որպեսզի Հիսուս Քրիստոսի անվան առջև խոնարհվի ամեն ծունկ՝ թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների և թե՛ սանդարամետրականների, և ամեն լեզու խոստովանի, որ Հիսուս Տեր է՝ ի փառս Հայր Աստծո*», Փիլ. 2, 5-11:

Տ. Հովսեփ
07.04.2022

Խաչի փրկարար զոհաբերությունը

Ի սպառ հնազանդությունը Հիսուսին տարավ մինչև Խաչ: Եվ Հիսուս չէր տրտնջում, ինչպես գրում է Եսայի մարգարեն՝ Տիրոջ ծառայի մասին. «*Նա մորթվելու տարվեց ոչխարի պես, գառան նման անմռունչ կանգնած է խուզողի առաջ և բերանը չի բացում*», Ես. 53, 7: Հիսուս չէր պաշտպանում ինքն իրեն, երբ զինվորները ձերբակալում էին իրեն՝ Պետրոսին հրամայելով սուրը պատյան դնել և ասելով, թե այդպես պետք է կատարել Աստծո արդարությունը: Հիսուս չէր պաշտպանում ինքն իրեն ատյանում՝ հրեաների առաջնորդների և Պիղատոսի առջև, երբ իրեն մեղադրում էին և խփում: Նույնիսկ Խաչին գամված, երբ ասաց 21-րդ սաղմոսի խոսքերը. «*Էլի՛, էլի՛, լամա սաբաքթանի՝ Աստված իմ, Աստված իմ, ինչու՞ լքեցիր ինձ*», Մտթ. 27, 46, Հիսուս ոչ թե բողոքում էր Հորը՝ իր սեփական տառապանքի համար, այլ արտահայտում էր ընդհանրապես մարդ արարածի՝ մեղքի մեջ անկյալ, լքված, թշվառ վիճակը, Աստծո կարծեցյալ «բացակայությունը» աշխարհի խավարի մեջ: Հիսուս իր շուրթերով և իր տառապանքի գբից դեպի Հայրն է առաքում ամբողջ մարդկությա՛ն տրտունջը և ցավի աղաղակը: Սաղմոսի բառերով աղոթելը մի ամբողջ ժողովրդի՛ աղաղակն է, որ Հիսուս դարձնում է Իրենը և միաժամանակ այդ աղաղակից Իր տառապանքով նոր հույս է արարում, քանի որ Ինքն է Աստծո արարող Խոսքը, որով ստեղծվեց աշխարհը. «*Աստված ասաց. «Թող լույս լինի», և լույս եղավ*», Ծննդ. 1, 3: Բայց այս անգամ Աստծո Խոսքը զոհաբերվելո՛վ է արարում նոր հույսը մարդու համար, որպեսզի մեկընդմիշտ բացատրի, որ մեղքի և մահվան հաղթահարումը միայն սիրո և տառապանքի միջոցով է հնարավոր: Նույն 21-րդ սաղմոսում, որ սկսվում է լքվածության մասին բառերով, կա հույս արտահայտող հետևյալ համարը. «*Քանզի Տերը չարհմարհեց, չանարգեց աղքատիս աղոթքը և ինձնից երես չդարձրեց, այլ երբ աղոթեցի, լսեց ինձ*», Սղմ. 21, 25: Այս վստահությունը բխում է որդիական հնազանդությունից, Հոր հետ Որդու լիակատար հաշտությունից և սիրո միությունից. Որդին գիտի, որ Հայրը արդեն իսկ լսել է իր աղոթքը և մտնում է մահվան ստվերների մեջ՝ վստահ, որ Տերը դուրս է հանելու Իրեն հաղթանակած. «*Թեկուզ գնամ մահվան ստվերների միջով, չպիտի վախենամ, քանզի Դու, Տեր, ինձ հետ ես*», Սղմ. 22, 4: Հիսուս գիտի, որ Հայր Աստծո հետ միասին հաղթահարելու է ամեն ինչ՝ նույնիսկ ամենասարսափելի թշնամուն, որ մահն է՝ ոչ միայն այն պատճառով, որ Հայրն ամենակարող է և «ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է», ըստ Իր խոսքի, այլ նաև՝ այն պատճառով, որ իր մատուցած զոհաբերությունն արդար է, *ի սպառ սիրո պատարագ է, ի սպառ հնազանդության պտուղ*, արդար վաստակ, անշահախնդիր և ինքնանվեր ծառայություն՝ ընդունելի Հոր համար: Հիսուս գիտի, որ Իր մեկ անգամ և ընդմիշտ զոհաբերությամբ Աստծո հետ հաշտեցնելու է մի ամբողջ մարդկային սերունդ՝ լիակատար և ամենաճանրակշիռ ձևով հատուցում կատարելով մարդկային բոլոր մեղքերի և հանցանքների փոխարեն և փրկագին վճարելով յուրաքանչյուր մարդ արարածի համար և այդպիսով պարտության է մատնելու սատանային. «*Հիմա՛ է, որ այս աշխարհի իշխանը դուրս կնետվի*»:

Հիսուս սատանայի ձեռքից խլում է նրա ամենազորեղ զենքը՝ մահը և այն դարձնում սիրո գործ

Մի անգամ, երբ Հիսուսին մեղադրում էին սատանայի հետ գործակցելու մեջ, Հիսուս մի շատ կարևոր բացատրություն տվեց. «*Երբ հզոր մի մարդ լավ զինվի՝ պահպանելու իր տունը, նրա ունեցվածքը ապահով կլինի: Բայց եթե նրանից ավելի հզորը գա նրա վրա և հաղթի նրան, նրանից կհանի այն զենքերը, որոնց վրա հույս էր դրել, և նրա ավարը կբաժանի*», Ղկ. 11, 21-22: Այս խոսքերը մեզ հուշում են մի ճշմարտություն. Հիսուս՝ որպես Աստծո կատարյալ հնազանդ որդի, իր սրբությամբ և ամբողջ զորությամբ եկավ այս աշխարհի իշխանի սատանայի վրա, որ իր տունը՝ այս աշխարհը պահում է մեղքի, վախի և մահվան զենքերով և այդ զենքերը խլեց նրանից: Հիսուս ներում էր մարդկանց մեղքերը և բուժում նրանց, քաջալերում էր սրտով բեկյալներին, դևերի գերությունից ազատում էր դիվահարներին և կեղեքվածներին, ըստ Եսայու մարգարեության, իր կյանքի օրինակով սովորեցնում էր կատարել Աստծո կամքը և պատվիրանները և, ի վերջո, սատանայից խլեց նրա ամենահզոր զենքը՝ մահը և այն դարձրեց սիրո գործ՝ պատարագ: Ինչպե՞ս: Հիսուս ասում է. «*Ոչ ոք չի կարող իմ կյանքը խլել: Ես իշխանություն ունեմ իմ կյանքը տալու և այն վերստին առնելու*» և այդպես էլ արեց: Սատանան նրա վրա ոչ մի իշխանություն չուներ, քանի որ Հիսուս կատարելապես անմեղ էր՝ անխոցելի և անպարտելի սատանայի համար: Հետևաբար, սատանան չէր կարող խլել Հիսուսի կյանքը: Հիսուսի մարմինը մահկանացու էր, բայց Հիսուս Իր մարմինը տվեց ոչ թե հարկադրաբար, այլ՝ միայն ու միայն Ի՛ր կամքով՝

որպես ի սպառ սիրո և զոհաբերության կատարյալ արտահայտություն: Սա նշանակում է՝ *Հիսուս սատանայից խլեց նրա ամենազորեղ զենքը՝ մահը և այն կյանքի հարկադիր կորստից, վերջակետից և կործանումից վերածեց սիրո կատարյալ արտահայտության, ինքնանվիրման միջոցի, սիրո արտահայտություն. «Չկա ավելի մեծ սեր, քան երբ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար»,* ըստ Իր խոսքի: Հիսուս փոխեց մահվան տրամաբանությունը: Սա՛ է պատճառը, որ Խաչը մահապատժի գործիքից վերածվեց կենսատու, կենարար գործիքի և ծաղկեց. այն քրիստոնյայի համար այլևս նշանակում է ոչ թե պատիժ, ոչ թե վերջակետ, այլ՝ նոր կյանքի սկիզբ, փրկության հնարավորություն, որով փրկագնվեց ամբողջ մարդկային ցեղը: Հիսուս իր մահով բացատրեց Խորհրդավոր ընթրիքի ժամանակ Սուրբ Հաղորդության հաստատման խոսքերը. «*Առե՛ք կերեք, այս է իմ մարմինը, որ բաշխվում է ձեր և շատերի մեղքերի քավության և թողության համար», «Խմե՛ք սրանից բոլորդ, ա՛յս է նոր ուխտի իմ արյունը, որ հեղվում է ձեր և շատերի … համար*»: Հիսուսի մահով և Խաչի վրա հեղված արյամբ նոր ուխտ կնքվեց Աստծո և մարդկության միջև, որի երաշխավորը այլևս Հիսուսի Քրիստոս Ինքն է՝ իր քավչարար զոհաբերությամբ կամ կենսատու մահով, ինչպես մեռնող և նոր կյանք տվող ցորենի հատիկը. «*Եթե ցորենի հատիկը հողի մեջ դրվելով … մեռնի, բազում արդյունք կտա*»:

Հիսուսի մահը իր մեջ նոր կյանքի հույս և հնարավորություն պարունակող մահ էր. երբ մահվանից հետո զինվորներից մեկը տեգով խոցեց Նրա կողը, Սուրբ Սրտից արյուն ու ջուր հոսեց: Եկեղեցու հայրերն այս արյունն ու ջուրը համարում են աստվածային շնորհների առատահոս գետի հետ, որ կյանք է տալիս Աստծո ժողովրդին՝ Եկեղեցուն՝ որպես մկրտություն և Սուրբ Հաղորդություն:

Խաչի վրա մեռավ հին Ադամը, որպեսզի վերածնվի նոր Ադամը: Խաչի վրա Հիսուսի Պատարագով սկսվեց սատանայի պարտությունը, որ իր վերջնական լրումին է հասնելու Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ և Տիրոջ Սուրբ Եկեղեցու յուրաքանչյուր հավատացյալի հավատքի և սրբության միջոցով, ովքեր կսիրեն ու կհավատան Կյանքի Առաջնորդին՝ Խաչված և Հարություն առած Տեր Հիսուսին և Նրա հետ միասին խաչակրությամբ և տառապանքով հաղթական ավարտին կհասցնեն Տիրոջ փրկարար առաքելությունը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ



Հիսուսի չարչարանքների մասին խորհրդածությունները մեզ բերեցին-հասցրեցին ամենակարևոր հանգրվանին՝ Հիսուսի հարությանը, որ քրիստոնեության հիմնաքարն է: Առանց հարության քրիստոնեությունն ինքնին կդառնա անիմաստ, ինչպես գրում է Սբ. Պողոսը. «*Եթե Քրիստոս հարություն չի առել, ապա ի զուր է մեր քարոզությունը, ի զուր է նաև ձեր հավատը*», Ա Կորնթ. 15, 14: Ինչու՞ է այսպես գրում Սբ. Պողոսը: Պատասխանը հստակ է. Հարությունը քրիստոնեական հավատքի նպատակն է, այսինքն՝ *վերջնական հաղթանակ՝ չարի հանդեպ, մեղքի հանդեպ և մեղքի ամենածանր հետևանքի՝ մահվան հանդեպ*: Հավատքը քրիստոնյային առաջնորդում է դեպի այդ վերջնական և երանելի հաղթանակը, առանց որի հավատքի ամբողջ ընթացքը, կամ նույն Պողոսի բառերով՝ ամբողջ «բարի պատերազմը», որ քրիստոնյան մղում է իր հոգևոր կյանքում, դառնում է իմաստազուրկ, որովհետև անհնարին է պայքարել, արյուն հեղել, հալածանք կրել, ծաղրուծանակի ենթարկվել, կյանքդ նվիրել և զոհաբերվել՝ առանց հաղթանակի հասնելու մտադրության և իրական հնարավորության: Մենք՝ որպես քրիստոնյաներ, հավատում ենք և վստահ ենք, որ հաղթելու ենք չարին և մահվանը, այսինքն՝ մարմնով հարություն ենք առնելու մեռնելուց հետո, քանի որ Հիսուս Քրիստոս՝ Կենդանի Աստծո Որդին, Երկնքից իջավ, մարդեղացավ, մտավ մարդկային պատմության մեջ և մարդկային իրականության ու ժամանակի մեջ անձամբ փաստեց, որ մարդկային մարմնի հարությունը հնարավոր է և արդեն իսկ իրականություն է դարձել՝ *Իր մահով և Հարությամբ*: Աստված սա փաստեց ոչ թե ուրիշին մահվան ենթարկելով՝ այլ Իր Որդուն մատնելով դառն չարչարանքների, մահվան և հարություն տալով Նրան և Նրա հարության փաստո՛վ խոստացավ, որ դա հնարավոր է նաև յուրաքանչյուր մարդ արարածի համար, ով կհավատա Հիսուսին, կապրի Նրա նման, կպահի Նրա խոսքը և մկրտությամբ կդառնա Նրա ստեղծած ընտանիքի՝ Եկեղեցու մի մասը՝ որպես ճշմարիտ որդի՝ Հայր Աստծո և քույր կամ եղբայր՝ Հիսուս Քրիստոսի: Աստված ողորմած է և սիրում է իր բոլոր զավակներին՝

այնպես ինչպես սիրում է Հիսուսին և բոլորին շնորհելու է հարության նույն մեծագույն պարգևը՝ միայն Իր Անդրանիկ և Միածին Որդուն հավատալու պայմանով. «*Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատա, չկորչի, այլ՝ ընդունի հավիտենական կյանքը*», Հվի. 3, 16:

Իսկ ինչպե՞ս տեղի ունեցավ Հիսուսի հարությունը: Հիսուս Իր մարդկային մարմնով, որ ամեն ինչով նույնպիսի մարմին էր, ինչպես ցանկացած մարդկային մարմին՝ իր կարիքներով և տկարություններով, չարչարվեց, խաչվեց, մեռավ, դրվեց գերեզմանի մեջ, բայց չենթարկվեց ապականության, այսինքն՝ չքայքայվեց: Սա ամենամեծ հարցն է, որ հուզում և կասկածներ է առաջացնում յուրաքանչյուր մեկի մոտ, ով Հիսուսի Հարությանը նայում է կասկածանքով կամ՝ հիմնվելով զուտ մարդկային կենսափորձի տվյալների վրա՝ առանց անպայմանական և անվերապահ հավատքի: Բանն այն է, որ Քրիստոսի մարմինը թեև զերծ չէր մարդկային տկարություններից, որոնք ադամական մեղքի հետևանք են, բայց կատարելապես *զերծ էր այդ տկարությունների պատճառից, որ մեղքն է*. Հիսուս անարատ և անմեղ էր ամբողջովին: Զերծ լինելով մեղքից և մշտապես՝ նաև գերեզմանում միացած լինելով Աստծո Որդուն, այսինքն՝ աստվածային անմահ և հավիտենական էությանը՝ Հիսուսի մարդկային մարմինը մնաց անապական՝ Աստծո գերբնական զորության շնորհիվ, որով և ի սկզբանե զերծ էր մնացել մեղքի որևէ բծից և իր մարդկային կյանքը երկրի վրա ապրեց առանց որևէ մեղք գործելու, Հայր Աստծո կամքին կատարյալ հնազանդության մեջ՝ որպես ճշմարիտ Որդի: Անարատ Կույս Մարիամից Անարատ հղացվածը՝ Սուրբ Հոգու զորությամբ և ոչ տղամարդու միջոցով, մնաց անապական նաև գերեզմանում՝ կատարելով սաղմոսի մարգարեությունը՝ թե. «*Մարմինս հույսով կհանգստանա, քանի որ իմ անձը չես թողնի գերեզմանում, և քո սրբին ապականություն տեսնել չես տա: Ցույց տվեցիր ինձ կյանքի ճանապարհը և քո երեսի ուրախությամբ հագեցրիր ինձ*», Սղմ. 15, 9-11:

Ինչպիսի՞ն էր Հիսուսի Հարուցյալ Մարմինը: Ավետարանները մեզ հայտնում են, որ այն հաճախ անճանաչելի էր աշակերտների համար և ճանաչելի՝ երբ Հիսուս կամենում էր: Այն ուներ վերքերը, որոնք բացվել էին խաչի տառապանքներից և որոնք համոզեցին անհավատ Թովմասին, որ չէր կարողանում հավատալ, մինչև իր ձեռքերը չիպեց Հիսուսի վերքերին և ապա միայն ապշած ու համոզված՝ բացականչեց. «*Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ*»: Եվ Հիսուս պատասխանեց նրան. «*Երանի՛ նրանց, ովքեր չեն տեսել, սակայն կհավատան*», Հվի. 20, 28: Այն այլևս փառավորյալ, անեղծ կամ հոգևոր մարմին էր, ինչպես բացատրում է Սբ. Պողոսը՝ հարուցյալների մարմինը. տե՛ս՝ Ա Կորնթ. 15: Մենք չենք կարող այն հստակորեն պատկերացնել, որովհետև մենք, ի տարբերություն առաքյալների, դեռ չենք տեսել մի մարդկային մարմին, որ մահվան ճիրաններից ազատված լինի կամ ենթակա չլինի տկարությունների և ապրի հավիտենական կյանքով՝ լինելով միաժամանակ և՛ Աստծո աջ կողմում, և՛ երկրի վրա՝ մեզ հետ, «բոլոր օրերում, մինչև աշխարհի վախճանը», Մտթ. 28, 20: Չենք տեսել, բայց հրավիրված ենք Աստծո պարգևած հավատքի գերբնական զորությամբ հավատալու, որովհետև ով հավատում է, Հիսուս նրան երանի է տալիս, ըստ իր խոսքի: Ուրեմն, որքա՜ն բարձր հոգևոր աստիճանի վրա է կանգնած նա, ով *ճշմարտապես* հավատում է Հիսուսի Հարությանը և Հիսուսի Հարության շնորհիվ՝ նաև յուրաքանչյուր մարդկային մարմնի հարությանը:

Յուրաքանչյուրս, մտածելով Հիսուսի Հարության մասին, հրավիրված ենք ամեն անգամ լրջորեն վերատեսնելու մեր հավատքը և վստահությունը՝ այս իրականության մեջ Աստծո գերբնական միջամտության հանդեպ, առ այն, որ «Աստծո համար անկարելի բան չկա», ինչպես ասում է Գաբրիելը՝ Կույս Մարիամին: Եվ Կույսը հավատաց ու դարձավ փրկության դուռ՝ ամբողջ մարդկության համար: Կույսը հավատաց, և «Աստված մեծամեծ գործեր արեց նրա համար», և մարդկային սերունդները երանի են տալիս նրան՝ այդ հավատքի և խոնարհության համար: Հիսուս ևս երանի է տալիս նրան, ով կհավատա իր Հարությանը, մարդկային մարմնի հարությանը, որովհետև դա հավատք է՝ մարդկային տեսանկյունից անհավանական բաների հանդեպ, դա հավատք է առ այն, որ այս իրականությունը կարող է մի քանի վայրկյանում բոլորովին փոխվել՝ Աստծո մատով, Աստծո մեկ խոսքով, որով ստեղծվեց աշխարհը: Ինչպիսի՜ հեշտությամբ են հրեշտակներն ավետում յուղաբեր կանանց. «*Այստեղ չէ նա, հարեա՛վ, ինչպես ինքն ասել էր*»: Եվ հետո Հիսուսն Ինքն է կանգնում կանանց առաջ ողջ ու առողջ և ասում. «Ողջու՛յն ձեզ…», իսկ վերնատանը, երբ փակ դռներով եկավ և նույն մարմնով հայտնվեց վախեցած աշակերտների մեջ ու ասաց. «Խաղաղությու՛ն ձեզ…»: Այս ողջույնը և խաղաղությունը, որ տվեց Հարուցյալ Հիսուս, գալիս են վերահաստատելու իր՝ նախքան չարչարանքներն ասաց խոսքերը. «*Պետք է, որ այս աշխարհում նեղություններ կրեք, բայց քաջալերվեցե՛ք, որովհետև ես հաղթեցի աշխարհին*», Հվի. 16, 33:

Հարությունը խոստանում է հաղթանակ՝ կյանքի ամեն տեսակ դժվարությունների հանդեպ, բայց՝ ոչ ազատագրում այս կյանքում, խոստանում է Աստծո գերբնական զորությունը՝ մեր մարդկային մարմինների «*կավե ամանների մեջ*» (Ա Կորնթ. 4, 7), որով կկարողանանք համբերատարությամբ և որպես քաղցր բեռ կրել մեր դժվարությունները, ցավերը և դրանցից բարիք հանել: Ի վերջո, Հարությունը մի հույս է, որը «երբեք չի ամաչեցնում», որովհետև Հարությունը մեզ հիշեցնում է մի շատ կարևոր ճշմարտություն՝ այն, որ Աստված սիրում է մեզ՝ Ինքն իրեն զոհաբերելու աստիճան, ի սպառ, «*որովհետև Աստծո սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ*», Հռմ. 5, 5:

Ուրեմն, Հարությունը միայն մարմիններին չի վերաբերվում, այլ՝ հոգու հաղթանակին, «*ներքին մարդու*» շինությանը և հաստատմանը: Բայց մարմնի հարությունը, անապական կամ «հոգևոր մարմնի» պարգևը, որ պետք է ստանանք՝ որպես գնահատումն մեր հավատքի և սրբության ձգտումների, վերջնական գրավականն է չարի պարտության և մեղքի վերացման, մահվան կործանման, որովհետև մարդկային մարմնի ապականությունը կամ տկարությունը և մահվան

ենթակա լինելը մարդկային անհնազանդության մեղքի և սատանայի կողմից մարդկային հոգին գերեվարելու ամենավառ և հստակ արտահայտությունն է. «*Նրանց աչքերը բացվեցին, և հասկացան, որ մերկ են*», Ծնն. 3, 7: Մարդն իր հոգևոր կյանքն Աստծո առաջ ապրում է մարմնի միջոցով, նաև հավիտենական կյանքը պետք է ապրի մարմնի միջոցով, իսկ մարմնի վիճակը մարդու ներքին կերտվածքի մի արտահայտությունն է. ինչպես ներքին մարդն է, այդպես էլ կլինի արտաքին մարդը, «որովհետև սրտից են դուրս գալիս չար խորհուրդները…», Մտթ. 15, 19: Եթե մարդու ներսը ապականված է, այդպիսին կլինի նաև արտաքինը, և հակառակը՝ եթե մաքրենք մեզ ամեն տեսակ պղծությունից և չար խորհուրդներից, Աստծո Հոգին կբնակվի մեր մեջ և մեր մարմինները կդարձնի իր անապական տունը. «*Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճարն են*», Ա Կորնթ. 6, 19:

Մարիամ Մագդաղենացին վերագտնում է իր կյանքի իմաստը

Տիրոջ Հարության ամենահուզիչ պատկերներից մեկը Մարիամ Մագդաղենացու և Հիսուսի հանդիպումն է՝ դատարկ գերեզմանի մոտ, որի մասին գրում է Հովհաննեսը՝ 20, 11-18: Մարիամը, ըստ Հովհաննեսի, առաջինը գնաց գերեզման և տեսավ որ Հիսուսի մարմինը չկա, ապա գնաց հայտնեց Պետրոսին ու Հովհաննեսին, որ եկան և համոզվեցին, որ գերեզմանը դատարկ է և տարակուսած գնացին տուն, իսկ Մարիամը չէր կարողանում հեռանալ դատարկ գերեզմանից, այլ դրսում նստած՝ լաց էր լինում: Մարիամի ցավն անասելի էր, նա հուսահատության անդունդն էր ընկել, պետք է մտածել թերևս, որ նա այլևս իմաստ չէր գտնում ապրելու, քանի որ իր կյանքի իմաստն իրենից խլել էին անարդարացիորեն և անհասկանալի ստորությամբ: Իր կյանքի իմաստը Հիսուսն էր, որ իրենից յոթը դև էր հանել ու իրեն բուժել դիվահարությունից, գուցե, եթե ընդունենք միջնադարյան ավանդությունը, նաև՝ փրկել անբարոյական կյանքից: Ինչ էլ լինի՝ Մարիամ Մագդաղենացին մի տառապյալ կին էր, որ իր կյանքի իմաստը տեսնում էր Հիսուսին ծառայելու և նրան հետևելու մեջ: Եվ հանկարծ մի օր Հիսուսին մատնեցին, ձերբակալեցին՝ որպես մի հանցագործի և սպանեցին՝ խաչից կախելով: Եվ այդ ամենը Մարիամը տեսավ իր աչքերով: Նա խաչի տակ էր Աստվածամոր հետ միասին և տեսավ Հիսուսի հոգեվարքը: Բայց նրա ցավը միայն խաչով չավարտվեց: Երբ Մարիամը կիրակի արշալույսին եկավ գերեզման՝ իր Ուսուցչի մեռած մարմինը յուղով օծելու, այն չգտավ. նույնիսկ մարմինը խլեցին իրենից, ինքն այլևս ոչինչ չուներ իր Ուսուցչից, միայն հուշեր: Իր կյանքի իմաստը հոդս էր ցնդել, և չկար մեկը, որ այն կարողանար վերադարձնել: Երբ Հիսուսի սնարին նստած երկու հրեշտակները հարցրեցին Մարիամին, թե ինչու է լալիս, նա պատասխանեց. «*Որովհետև իմ Տիրոջը գերեզմանից վերցրել են և չգիտեմ՝ ուր են դրել*»: Եվ շրջվելով իր թիկունքի կողմը՝ Մարիամը տեսավ Հիսուսին, բայց չգիտեր, որ ինքն է, այլ մտածեց, թե պարտիզպանն է: Հիսուս նրան հարցրեց, թե ինչու է լալիս և ում է փնտրում: Մարիամը պատասխանեց. «*Տեր, եթե դու ես նրան վերցրել, ասա՛ ինձ, թե ուր ես դրել նրան, **որպեսզի ես նրան վերցնեմ***»: Մարիամն ուզում է վերստին իր մոտ ունենալ իր Ուսուցչին՝ իր կյանքի իմաստը: Նա չի կարողանում հաշտվել այդ անարդար իրականության հետ, որ ամեն ինչ ավարտված է, որովհետև Հիսուս ամեն ինչ տանում էր դեպի լուսավոր ապագա, ամեն ինչ, որ Տերն անում էր կամ խոսում, լի էր նոր կյանքի խոստումով: Եվ Հիսուսի հաջորդ քայլը փաստում է, որ Հիսուս իր խոստման տերն է: Նա իր ծանոթ, Մարիամի համար հարազատ ձայնով ջերմությամբ դիմում է տառապյալ կնոջը. «***Մարիա՛մ***»: Եվ սա ճանաչելով ձայնից՝ ցնծությամբ բացականչում է. «***Ռաբբունի՛***», որ նշանակում է՝ վարդապետ: Որքա՜ն ջերմություն, որքա՜ն կյանք, հույս, ուրախություն կա այս երկու բառերի մեջ: Հիսուս կնոջն ուզում է ասել՝ *այդ ես եմ, քո կյանքի իմաստը, այն չի կորել, ոչ ոք այն չի կարող քեզանից վերցնել, «ես իշխանություն ունեմ իմ կյանքը տալու և այն վերստին վերցնելու», ես իմ կյանքը տվեցի, որպեսզի փրկեմ քո՛ կյանքը, որպեսզի ինձ հետ միասին քեզ համար էլ դուռը բացեմ, որպեսզի հարություն առնես և դուրս գաս մեղքի և անհուսության գերեզմանից: Մարիա՜մ երբեք մի վախեցիր, որովհետև ես սիրու՜մ եմ քեզ և երբեք մենակ չեմ թողնի*: Այս բոլորը կարծես խտացված են այդ մեկ բառի մեջ՝ «Մարիա՜մ», բայց դա կարելի է միայն կռահել: Երանի՜ թե մենք էլ կարողանանք մեր հուսահատության րոպեին լսել մեր անունը՝ Տիրոջ քաղցր ձայնով, որ շշնջում է նաև մեր սրտերի մեջ, մեր աղոթքների ժամանակ: Եվ երանի՜ մենք էլ կարողանանք Մարիամի նման Հիսուսին պատասխանել մեր լեզվով՝ «Վարդապե՜տ», որովհետև այդ բառով ամեն ինչ ասված է Քրիստոսի աշակերտի համար:

Մարիամը նետվեց դեպի Հիսուսը՝ նորից իր մոտ առնելու՝ վերցնելու իր Վարդապետին իր մոտ, բայց Հիսուս ասաց. «*Ինձ մի՛ մոտեցիր, քանի դեռ Հորս մոտ չեմ բարձրացել…*»: Հարուցյալ Հիսուսին մոտենալու ժամանակը դեռ չէր հասել: Աստծո ծրագրում անեն ինչ իր ժամանակն ունի: Մարիամը դեռ պետք է վկայեր Հիսուսի Հարության մասին աշակերտներին և ուրիշ շատերին: Նա դեռ մեծ առաքելություն ուներ անելու երկրի երեսին՝ որպես հույսի առաքյալ, կամ ինչպես ավանդաբար ասել են, «առաքյալների առաքյալ»… այն կինը, որից Հիսուս յոթ դև էր հանել: Այսպես, Հիսուս կամենում է, որ յուրաքանչյուրս վկայենք Իր մասին աշխարհին և, երբ ժամանակը գա, Իր հետ միասին կիսենք Հարության ուրախությունը՝ Աստծո Արքայության մեջ, հարսանեկան սեղանի շուրջ:

Տ. Հովսեփ
29.04.2022

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ԿԻՍՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հատվածներ՝ Մարգարիտ Նիկոլյանի ինքնակենսագրական գրքից, որ կոչվում է «Իրականություն»

Արդեն տասներկու տարի է անցել, ինչ իմացել եմ, որ տառապում եմ անբուժելի հիվանդությամբ: Ես երբեք հաշվի չեմ առել այդ հիվանդության լրջությունը: Ես միշտ ինքս ինձ հույս եմ ներշնչել ու լավատես եղել, միշտ ասել եմ. «Ես լավ եմ լինելու»: Ես շնորհակալ եմ Աստծուն, որ ինձ այդքան ուժ է տվել հավատալու: Այլապես, այսքան տարի չէի կարողանա դիմանալ: Դա Աստծո կամքն է, Նա միշտ եղել է ինձ հետ և կլինի…

Դանդաղ, բայց վստահ եմ, որ լավ եմ լինելու: Եթե ոչ լիարժեք, ապա գոնե փայտերով կարողանալու եմ քայլել: Դա՝ շնորհիվ իմ հույսի և հավատի: Մարդ պետք է միշտ լավատես լինի, վատը պետք է չմտածի: Ես այդպիսին եմ. վատը միշտ մոռանում եմ ու աշխատում երբեք չհիշել:

Երբ մարդ կորցնում է հավատն ու հույսը, էլ ցանկություն չի ունենում ապրելու: Ինձ հետ էլ է այդպիսի բան պատահել, ես էլ չէի ուզում ապրել: Բայց Աստծո շնորհիվ՝ գտա կորցրածս հույսն ու հավատը…

Զարմանում եմ ինքս ինձ վրա: Իմ այս վիճակում կարողանում եմ ժպտալ, ուրիշներին լավ խորհուրդներ տալ, Աստծուն հավատալ: Իհարկե, լինում են պահեր, երբ հուսահատվում եմ, լացում եմ, բայց հետո սթափվում եմ ու նորից դառնում նույն մարդը…

Ոչինչ չեմ կարող անել, միայն աղոթել: Երանի՜ ոտքերիս մեջ մի քիչ ուժ լիներ ու կարողանայի քայլել: Երևի աչքերս չտեսնեին՝ ավելի լավ կլիներ, քան՝ քայլել չկարողանայի: Թող ների՛ ինձ Աստված, եթե այսպես եմ մտածում: Ես միշտ գնում եմ եկեղեցի և բոլորի փոխարեն թողություն խնդրում Աստծուց, որ այլևս երբեք սխալ չգործենք, մեղք չգործենք:

Չգիտեմ, չգիտեմ՝ ինչու է Աստված ինձ այսքա՜ն տառապանք պատճառում: Միթե՞ ես այդքան ուժեղ եմ, որ կարողանամ դիմանալ այս չարչարանքներին: Միթե՞ սա Աստծո կամքն է. ես չգիտեմ: Միայն գիտեմ, որ երևի չդիմանամ: Օր է լինում, որ ուժասպառ եմ լինում, օր է լինում, որ կարողանում եմ ուժերս հավասարաչափ բաշխել ու մինչև վերջ դիմանալ: Սա, երևի, Աստծո տված ևս մի փորձություն է, որը պետք է հաղթահարեմ: Իմ ճակատագիրը սա՜ է՝ ուժեղ լինել ու հաղթահարել…

Քրիստոս փայտե խաչը տարավ տանջանքով, ես էլ իմ հիվանդությունն եմ տանում տանջանքով: Ե՛ս էլ չեմ հանձնվում, հույսս չեմ կորցնում և որքան կարող եմ՝ կպայքարեմ, կդիմանամ:

Ես տեսե՛լ եմ Աստծուն, ես հավատում եմ Նրան: Նա ինձ ուժ է տվել, և ես գիտեմ, որ ամեն ինչ լավ է լինելու…

Ուրախությունը պետք է ինձանից չհեռանա: Ես շատ եմ տառապել: Ուզում եմ մի քիչ էլ երջանիկ ապրել: Աստված տվել է ինձ հիվանդություն, բայց Նա ինձ սիրում է և ուժ կտա՝ երջանիկ ապրելու համար:

Հայր մեր … Ողջույն քեզ, Մարիա՜մ … Տեր Աստված ների՜ր մեր մեղքերը … Ամեն:

Ճանապարհ դեպի ճշմատրություն

Մեծ Պահքի շրջանը աղոթքով, ծոմապահությամբ և ապաշխարությամբ անցկացնելը Եկեղեցու կարևոր ավանդություններից մեկն է և ամենահարմար առիթը՝ Քրիստոսի Սուրբ Սրտին մոտենալու և հոգևոր կատարելության ձգտման համար: Ինչպես որ հրեա ժողովուրդը քառասուն տարի անցկացրեց Սինայի անապատում, Քրիստոս քառասուն օր դարձյալ անապատում ծոմապահությամբ և փորձություններով պատրաստվեց չարչարանքներին, խաչելությանը, մահվանը և փառահեղ հարությանը: Մենք նույնպես մեր աղոթքներով և ծոմապահությամբ բաժնեկից լինենք Քրիստոսի չարչարանքներին, մահվան և փառահեղ հարության անիմանալի փրկարար խորհրդին. մեր սրտերը նրա սիրով վառենք և նրա սիրով սրբենք:

Աստված ասաց Աբրամին. «Հեռացիր քո երկրից, քո ցեղից ու քո հոր տնից և գնա այն երկիրը, որ ցույց կտամ քեզ: Քեզ մեծ ցեղի նախահայր պիտի դարձնեմ, պիտի օրհնեմ քեզ, պիտի փառավորեմ քո անունը, և դու օրհնյալ պիտի լինես:

Քեզնով պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ժողովուրդները: Եվ Աբրամը գնաց, ինչպես ասել էր նրան Աստված», Ծնն. 12. 1-4:
Աստվածաշունչ մատյանում մենք հաճախ հանդիպում ենք դրվագների, թե ինչպես է Աստված կանչում տարբեր մարդկանց և հայտնում նրանց իր հետագա ծրագիրը: Հայր Աբրահամը ապրում էր Ուր քաղաքում, որ գտնվում էր այժմյան Իրաքի տարածքում, երբ Աստված կանչեց նրան, որպեսզի ուղարկի ուրիշ երկիր: Աբրամը լսեց Աստծու կանչը, խոնարհաբար ենթարկվեց Բարձրյալի կանչին, և հետևեց նրան: Աստված մեզ նույնպես հաճախ կանչում է, որպեսզի փոխենք մեր կյանքը, թոթափենք մեղքի ծանրությունը, լիարժեք զոջում ապրենք, և հավատարիմ մնանք Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Մեծ Պահքի շրջանը մի կարևոր առիթ է, որ մի կողմ թողնենք առօրյա կենցաղային հոգսերը, ավելի շատ ուշադրություն դարձնենք մեռ հոգևոր կյանքին և ճշմարիտ արժեքներին: Աբրահամի նման մենք էլ թողնենք մեր ինքնահոսի մատնված հանգիստ կյանքը, հետևենք Քրիստոսի ուսմունքին, պատրաստ լինենք հանձն առնելու այն տևական նեղությունները, որ տրված են՝ մեզ ի շահ մեր հոգիների փրկության: Ինչքա՜ն բարձր պետք է վարձատրվենք այն նեղությունների համար, որ կրում ենք ի Քրիստոս, երբ լիարժեք վստահենք և կատարենք նրա կամքը մեր կյանքում: Փնտրե՛նք այն ծրագիրը, որ Աստված պատրաստել է յուրաքանչյուրիս համար: Բայց մեր կյանքի առաքելությունը չի վերջանում անհատական պարփակված խոնարհությամբ և առաքինություններով: Հիշե՛նք մեկ այլ դրվագ՝ Աստվածաշունչ մատյանից, թե ինչպես Աստված Հովնան մարգարեին, ով առաջին հրեա մարգարեն էր, որին ուղարկեց հեթանոսական երկիր՝ Ասորեստանի Նինվե քաղաք, և պատվիրեց անհավատ նինվեացիներին զգուշացնել հետ կանգնել իրենց մեղավոր կյանքից: Հովնան մարգարեն խույս տվեց և չհնազանդվեց Աստծուն՝ փախուստի դիմեց: Նա Թարսիս գնացող մի նավ նստեց, որը գնում էր Նինվեի հակառակ ուղղությամբ: Ճանապարհին փոթորիկ բարձրացավ: Երբ Հովնանը հասկացավ, թե իր պատճառով է, խնդրեց, որ իրեն ծովը նետեն, և նետելուց հետո ծովը հանդարտվեց: Աստված փրկեց նրան՝ կետ ձկան փորում երեք օր պահելով: Նա զղջաց իր արածի համար, գոհություն հայտնեց տիրոջը՝ իրեն փրկելու համար: Երրորդ օրը Աստված կետ ձկանը հրամայեց Հովնանին ափ նետել: Երկրորդ անգամ հնարավորություն տվեց և պատվիրեց գնալ Նինվե: Այս անգամ Հովնանը հնազանդվեց, և նրա քարոզության շնորհիվ նինվեացիները ապաշխարեցին: Բոլորը՝ սկսած թագավորից, ծոմ պահեցին, աղոթեցին Աստծուն, և Աստված գթաց նրանց: Այսպես Աստված ամեն անգամ, տեսնելով մեր կաղելը հավատքի մեջ, մեր անհնազանդությունն ու այլ մեղքերը՝ հաջորդ հնարավորությունն է տալիս և ձեռք մեկնում, որ վեր կանգնենք, ուղղենք մեր մեջքը, հաստատուն քայլերով գնանք դեպի ճշմարիտ լույսը՝ Քրիստոսը: Ամենքս յուրովի Հովնան մարգարեի նման մեր առաքելությունն ունենք: Անկախ մեր մասնագիտությունից՝ ոչ միայն պարփակված լինենք մեր աղոթքներով և ծոմապահությամբ՝ այլ մեր վարքով և գործով օրինակ լինենք ուրիշներին: Քրիստոսի խոսքը՝ երանելի լույսը, որ ճառագում է մեր սրտերում, բարձրաձայնենք հրապարակներում, ինչպես արեցին առաքյալները:
Եթե այս ձևով արդարություն գործած լինենք, Քրիստոսի խաղաղությունը մեր տան մեջ կլինի: Երբ Տիրոջը կանչենք նա պիտի պատասխանի.
- Ահավասիկ ես այստեղ եմ...
Հովհաննես Միքայելյան

Մեծ Սեպասարի հոգևոր զարթոնքը

Հայաստանում յոթանասուն տարվա անաստվածությունից հետո, 1991թ. սկսեց ակտիվանալ հոգևոր կյանքը: Մեծ Սեպասար համայնքում ևս սկսեց գործել կաթողիկէ եկեղեցին, վերստին սկսեցին կատարվել հոգևոր արարողություններ, մատուցվում էր Սուրբ Պատարագ: Հայ Կաթողիկէ Առաջնորդարանն ուղարկում էր հոգևորականների՝ կրոնը և հավատքը ժողովրդի մեջ ամրապնդելու համար: Շատ դժվար էր. երկար տարիներ հոգևոր կյանքից զրկված լինելն իրենն ասում էր: Տարիներն անցնում էին, բայց հավատքը շատ դժվարությամբ էր վերահաստատվում համայնքում՝ վարդապետների և քահանաների ջանքերով: Սուրբ Պատարագին քչերն էին գալիս եկեղեցի: Երևի պատճառը քրիստոնեական ուսմունքի բացատրության կամ յուրացման պակասն էր, որի համար ժամանակ և շատ ջանքեր էին անհրաժեշտ: Բայց կար այն ինչ կար, և իրողությունն անժխտելի էր: Թվում էր, թե այդպես էլ կշարունակվի: Առաջնորդարանը մեր համայնքի հոգևոր հովիվ նշանակեց Տ. Հովսեփ քհն. Գալստյանին, որից հետո գյուղի հոգևոր կյանքն ավելի աշխուժացավ: Սառույցը սկսեց կամաց-կամաց կոտրվել, սկսեցին հավատալ և ավելի մոտենալ քրիստոնեական ուսմունքին, մարդիկ սկսեցին քահանայի մեջ տեսնել կարեկից և դժվարին պահերին շատերին ձեռք մեկնող անձի: Համայնքը և եկեղեցին դարձան հոգևոր կապով

շաղկապված: Եկեղեցի հաճախելիության մակարդակը բարձրացավ, աճեց հավատքը: Մարդիկ զգում են հոգևոր կյանքի անհրաժեշտությունը, որն արտահայտվում է ամենօրյա Պատարագով կամ այլ եկեղեցական արարողություններով: Եվ ուրախ եմ, որ այս ամենը գալիս է լրացնելու անցյալ տարիների ամբողջ բաց թողնված ժամանակահատվածը:

Սերգեյ Դանիելյան

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ...

Երբ փակում եմ աչքերս և մի պահ փորձում եմ հետ գնալ, հասկանում եմ, որ ժամանակը արագընթաց թռչնի նման սահում ու անցնում է: Մեր կյանքում իրադարձություններն այնքան արագ են ընթանում, որ շատ ժամանակ չենք էլ հասկանում, թե ինչ եղավ, ինչպես եղավ, որ այս փորձությունն էլ հաղթահարեցինք:

Տպավորություն է, որ ուրախ ու տխուր պահերը շրջափակել են ինձ ու պայքարի մեջ մտել: Տխրությունը փորձում է ամեն բան անել՝ ինձ կուլ տալու համար, փորձում է անդադար սխալ ճանապարհի վրա դնել, փորձում է հեռացնել Աստծուց: Սակայն Աստծո հանդեպ ունեցած իմ անդավաճան հավատն արգելում է ինձ ընկճվել: Ես բոլոր փորձություններն ու դժվարությունները գլուխս վեր պահած եմ դիմավորում. ժամանակ առ ժամանակ սահում ու ընկնում եմ, բայց արագ եմ ոտքի կանգնում, որովհետև առաջինն ինձ ձեռք մեկնում ու վեր է բարձրացնում հենց Աստված: Ամեն փորձություն հաղթահարելուց հետո հավատս Աստծո հանդեպ ավելի ու ավելի է մեծանում, քանզի հասկանում եմ, որ իմ ուժի, ժպիտի, ուրախ պահերի, երջանկության ու սիրո հեղինակը իմ մեծ հավատն է, Աստծո հանդեպ ունեցած անփոխարինելի սերն է:

Պահքի շրջանում փորձում եմ ավելի շատ ժամանակ հատկացնել Աստծուն, փորձում եմ ավելի շատ աղոթել, ավելի շատ բարի գործեր անել, պետք եղած ժամանակ զրկում եմ ինձ ինչ-ինչ բաներից, դիմացինիս օգնելու համար: Իմ կարծիքով, սա նվազագույնն է, որ կարող եմ անել իմ հոգու խաղաղության ու Աստծուն գոհացնելու համար: Չէ՞ որ Աստված իր ամենաթանկին՝ Զավակին նվիրեց՝ մեր մեղքերի մաքրման համար: Մենք էլ մեր աղոթքներով, հավատի զորեղացմամբ ու բարի գործերով պիտի պատասխանենք Աստծուն: Չէ՞ որ բարությունն աստվածային առաքինություն է: Այն Աստծո կողմից գնահատվող մարդկային ամենաբարձր որակն է, որի դիմաց մարդիկ անշուշտ կվարձատրվեն:

Կատյա Մարգարյան

«Հա՛յր, եթե կամենում ես, այս բաժակն ինձնից հեռացրու՛, բայց ոչ թե իմ կամքը, այլ քոնը թող լինի», Ղկ. 22, 42-43

Հիսուս գիտեր, որ ամբաստանվելու է, գանակոծվելու և խաչվելու է, և գիտեր, որ հարություն է առնելու, որովհետև այդ էր Հոր կամքը:

Հիսուսի Հարությունը քրիստոնեական կյանքի լավագույն իրադարձությունն է, քանի որ Իր Հարությամբ Հիսուս նոր լույս ծագեցրեց մարդկության կյանքում: Հաճախ կարելի է մտածել՝ արդյո՞ք մենք՝ մարդիկս, արժանի էինք նրա զոհաբերվելուն: Մենք, որ ամեն առիթով ավելի ենք հեռանում Աստծուց, մենք, որ հաճախ մոռանում ենք Նրա մասին, որ լքում ենք Նրան ու վերադառնում ենք, երբ դրա կարիքն ունենք: Մենք, երբեք չգոհանալով, բայց առիթ ունենալիս միանգամից դժգոհելով, արդյո՞ք արժանի էինք Հիսուսի տանջանքների արդյունքում փրկությունը ճաշակելուն: Ու հենց այդ մտորումների պահին պետք է հիշել Հիսուսի խոսքերը՝ «Հա՛յր, ներիր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»: Նույնիսկ վերջում, նույնիսկ մահվան շեմին, մարդու կողմից մատնված, անարգված, զրպարտված ու խաչին բարձրացված լինելով էլ Հիսուս սիրեց մարդուն, սիրեց մեզ ու խնդրեց փրկություն աններելիի համար: Բայց մենք մինչ օրս էլ շարունակում ենք մատնել ու դավաճանել Նրան, մեր գործողություններով, հաճախ նաև մեր չկատարած գործողություններով, որոնք պետք էր ու պարտավոր էինք անել:

«Այսպես պետք է չարչարվեր Քրիստոսը, երրորդ օրը հարություն առներ մեռելներից, և նրա անունով ապաշխարություն ու մեղքերի թողություն քարոզվեր բոլոր ազգերի մեջ՝ Երուսաղեմից սկսած», Ղուկ. 24:46-48:

Այսպես պետք է չարչարվեր Քրիստոս, որպեսզի մեզ թողներ կարևոր պատգամ՝ սիրեք ձեր Տեր Աստծուն և սիրեք ձեր մերձավորին, ինչպես ձեր անձը:
Իր մերձավորների համար Հիսուս կրեց չարչարանքների բեռը, մեզ սովորեցնելով սիրել իրար: Մեր մեջ կարևորելով սիրո հատկանիշը Հիսուս սովորեցրեց մեզ ապրել՝ սիրելով մարդկությանը:
Որովհետև ի վերջո՝ Հիսուս ապրեց, մահը չհաղթեց Նրան և Նրա մարմինը չապականվեց: Մահը՝ լինելով սատանայի առաջին ու գլխավոր զենքը, անկարող եղավ Ամենակարողի դեմ:
«Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերին, մինչև աշխարհի վախճանը»:
Եվ ահա կենդանի Հիսուսը մեզ հետ է, մեզնում ու մեր մեջ՝ այսօր, վաղը և միշտ:
Քրիստոս Հարյավ ի մեռելոց:
Նաիրա Ղազարյան

«Սկզբից էր Բանը, եւ Բանը Աստծու մօտ էր, եւ Բանը Աստուած էր», Հվհ. 1.1

Հիսուսը, ով փրկեց ինձ, խաղաղության իշխանն է, նա Աստծո որդին է: Նա ապրեց այս երկրի վրա, և խաչվեց ինձ և քեզ համար, թաղվեց և հարություն առավ և այժմ նստած է Հոր աջ կողմում: Նա Աստված է, ով եկավ այս աշխարհ մարդկային մարմնով: Նա անմեղ է, և միևնույն ժամանակ մարդ է: Նա պետք է մարդ լիներ՝ իրեն այս աշխարհին հայտնելու համար: Հիսուսն անարգվեց բոլորի կողմից, մարդկային զգացական տանջանքներով խաչին գամվեց, որպեսզի մենք ունենանք հավիտենական կյանք: Իրականում Աստված այլ կերպ կարող էր ծրագրել փրկությունը, բայց նա ուղարկեց իր Միածին Որդուն՝ որպես մի մանուկ, որը մեծացավ դարձավ երիտասարդ և հետո՝ տղամարդ: Նա պետք է գիտակից ընտրությամբ մահանար... «Եւ ուրիշ մէկի միջոցով փրկութիւն չկայ, որովհետեւ երկնքի տակ չկայ մարդկանց տրուած այլ անուն, որով կարելի լինի, որ մենք փրկուենք», Գործք Առաքելոց 4. 12: Աստված այս կերպ էր ծրագրել ամենը, որ մենք հասկանանք նրա սիրո և նվիրման չափը՝ դեպի մարդ արարածը: Հիսուսը միայնակ կարողացավ վճարել ողջ մարդկության մեղքի հատուցումը՝ իր արյամբ: Որ մարդը վերջապես հասկանա, որ իր կյանքը կարևոր է, որ փրկված է Հիսուսի արյամբ և զորավոր անունով: Հիսուսն եղավ միջնորդ՝ մեր և Աստծո միջև: Եվ իր փրկչագործությամբ վերականգնվեց Աստծո և մարդու այդքան կարևոր կապը: Յուրաքանչյուրիս հոգին էլ կարիք ունի շփվելու Նրա հետ, ով իրեն արարեց...Հիսուսը կատարյալ օրինակն է մարդկության համար: Նա եկավ որ մեզ սովորեցնի ճշմարտությունը, և կառուցի իր եկեղեցին: Հիսուսը ձևավորում է մարդու բնավորությունը: Նա կարող է փոխել մարդու էությունը: «Իսկ եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է. որովհետեւ հինն անցաւ, եւ հիմա ամէն ինչ նոր եղաւ», Բ Կորնթ. 5, 17:
Երբևէ մտածե՞լ ես, որ Աստված, լինելով այսքան զորավոր ու մեծ, ունի իմ և քո փոխադարձ սիրո և հավատարմության կարիքը: Այո՛, նա մշտապես սպասում է քեզ, որ դու մի օր կյանքդ կվստահես իրեն, կընդունես իրեն՝ որպես քո տեր և փրկիչ: Դուք կարո՞ղ եք պատկերացնել, Աստված, ով ստեղծել է երկինքն ու երկիրը, նա ով ամենազորավորն ու ամենասուրբն է ստեղծել է քեզ... նա ծրագիր ունի քո՛ կյանքի համար: Նա ճանաչում էր քեզ, երբ դու դեռ չէիր ծնվել: Նա գիտի քո ողջ կյանքը, տեղյակ է քո ցավերի, կյանքի բոլոր փոթորիկների մասին: Դու պատկերացնել անգամ չես կարող, թե ինչե՞ր ունի պատրաստած քեզ համար, եթե միայն որոշես քո կյանքում տեսնել Ի՛ր կամքը: Քո կյանքի բոլոր փոթորիկները դու կկարողանաս հաղթահարել՝ Աստծուց տրված զորությամբ ու իմաստությամբ, Նա է քեզ բարձրացնողը: Նա մեզ բոլորիս սիրեց անսահման մեծ սիրով, և այս փրկչագործությունը այդ սիրո լավագույն դրսևորումն էր: Մարդուն մնում է միայն հավատարմությամբ ծառայել Տիրոջը: Հիսուսին ճանաչելը որոշում է մեր հավիտենական ապագան: Նա՛ է լույսը և կյանքը աշխարհի: «Յիսուս դարձեալ խօսեց ժողովրդի հետ ու ասաց. Ես եմ աշխարհի լոյսը. ով իմ յետեւից է գալիս, խաւարի միջով չի քայլի, այլ կ'ընդունի կենաց լոյսը», Հովհ. 8, 12: Հիսուսը հաղթել է մահվան՝ Իր հարությամբ, նա ասում է. «Այս բաները ասացի ձեզ, որպէսզի ինձնով խաղաղութիւն ունենաք: Այստեղ, աշխարհում նեղութիւն պիտի ունենաք, սակայն քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին», Հովհ. 16, 33
Ամալյա Ադլոյան

Քրիստոսի չարչարանքները

Բոլոր ավետարանիչները գրեթե նույն կերպ են նկարագրում Հիսուսի խաչելությունը: Խաչափայտին գամված Քրիստոսով հաստատվում է կյանքի հաղթանակը: Քրիստոս Իր մահով ջնջեց մեր հակառակության կամ թշնամության ձեռագիրը, հաշտեցրեց Հայր Աստծո հետ, ազատեց անեծքից և հավիտենական դատապարտությունից: Հիսուսի խաչելությամբ ու մահվամբ իրականացան հինկտակարանյան բոլոր մարգարեությունները Մեսիայի գալստյան և փրկագործության վերաբերյալ: Հիսուս Քրիստոսի մահը մեծ զոհաբերություն է, քանի որ Աստված հանուն մարդկային մեղքերի քավության՝ թույլ տվեց, որ իր Որդին սպանվի: Հիսուս Քրիստոսը մահացավ մարդկության բոլոր անցյալ, ներկա և ապագա մեղքերի համար, որպեսզի ապաշխարող մեղավորները կարողանան մտնել Երկնքի Թագավորություն: Քրիստոսը չի խաչվել, Նա ինքնակամ թույլ է տվել իրեն խաչեն՝ ամբողջ մարդկության մեղքերի համար: Քրիստոսը կասկածի տակ դրեց հրեաների բոլոր սովորական տեսակետները բարեպաշտության վերաբերյալ, խարխլեց նրանց քահանայության հեղինակությունը: Հրեաների մեջ Աստծո երկրպագությունը, նախքան Մեսիայի գալուստը, բաղկացած էր գերազանց գիտելիքներից և բոլոր օրենքների և կանոնների ճշգրիտ կատարումից: Փրկչի քարոզները շատերին ստիպեցին մտածել Արարչի հետ հարաբերությունների նման տեսակետի կեղծիքի մասին: Բացի այդ, հրեաները փնտրում էին Հին Կտակարանի մարգարեություններում խոստացված Թագավորին: Նա ստիպված էր նրանց ազատել հռոմեական ստրկությունից և կանգնել երկրային նոր թագավորության գլխին: Քահանայապետները, հավանաբար, վախենում էին ժողովրդի կողմից բացահայտ զինված գործողությունից՝ ընդդեմ իրենց իշխանության և հռոմեական կայսեր իշխանության: Ուստի որոշվեց, որ «*մեզ համար ավելի լավ է, որ մի մարդ մեռնի ժողովրդի համար, քան ամբողջ ժողովուրդը կործանվի*» (Հվհ. 11, 47-53): Դրա համար նրանք խաչեցին Հիսուս Քրիստոսին: Եւ այս ամենի պատճառը Աստծո անսահման Սերն էր՝ դեպի մարդկությունը: Աստված Իր Միածին Որդուն ուղարկեց խաչվելու՝ մեզ փրկելու ու մեղքից ազատելու համար: Մարդ եւ Աստված հարաբերությունները խզվել էին ու գրեթե բոլորն էլ երես էին թեքել Աստծուց: Քրիստոս եկավ վերականգնելու այդ հարաբերությունները: Շատերը սա պարզապես ընդունում են որպես պատմական փաստ, իսկ շատերն էլ օգտվում են այս հնարավորությունից եւ Քրիստոսի Խաչելության միջոցով Աստծուն են մոտենում: Թո՜ղ որ այս Մեծ Պահքի շրջանը լինի մեզ բոլորիս համար՝ հնարավորություն անցյալում թողնելու մեր մեղքերը, եւ ետ դառնալու դեպի Աստված, Քրիստոսի միջոցով:

Տիրուհի Մուրադյան

Թերթի հովանավորներ՝

Ամեն. Տ. Տ. Ռաֆայել Պետրոս ԻԱ Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Թերթի կազմող և խմբագիր՝
Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝
Հոգեւոր հովիվ՝ Աշոցքի հայ կաթողիկէների
Հեռ.՝ +37455698957

Բաժանվում է ***անվճար***

Գյումրի, Հայ Կաթողիկէ Առաջնորդարան, 2022թ.